ԻՆՉՊԵՍ ԽԱՓԱՆՎԵՑ ՍԵԻՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Ներկայացվող նյութը երկար տարիներ խնամքով պահպանվել է հեղինակի դստեր՝ Լաուրա Գասպարյանի (ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դոցենտ) ընտանեկան արխիվում՝ ակնկալիքով, որ գալու են ազատ խոսքի, մտքի անկաշկանդ ժամանակներ, որ հնարավորություն է ընձեռվելու հարգանքի տուրք մատուցելու հոր հիշատակին՝ նրա աննախադեպ համարձակ հոդվածը հանրությանը ներկայացնելով:

Նիկոլ Վարդանի Կարապետյանը (1912-1982) ծնվել է Վասպուրականի Հայոց ձոր գավառի Քոել գյուղում:

1915 թ. ընտանիքը տեղափոխվել է Արևելյան Հայաստան՝ Երևան, այնուհետև բնակություն հաստատել Դիլիջան քաղաքում, ուր և Նիկոլ Կարապետյանը հաճախել է թիվ 2 դպրոց: Այնուհետև մասնակցելով հատուկ դասընթացների՝ ստացել է տարրական դպրոցի ուսուցչի որակավորում: Հետագայում ուսումը շարունակել է Կրասնոդարի մանկավարժական ինստիտուտում: Վերադառնալով Երևան՝ 1936 թ. ընդունվել է տեղի Հայկական մանկավարժական ինստիտուտի լեզվագիտության ֆակուլտետ և ստացել միջնակարգ դպրոցի ուսուցչի որակավորում: Այդ տարիներին պատմություն և հայոց լեզու է դասավանդել Երևանի Մաքսիմ Գորկու անվան դպրոցում:

1940 թ. ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը, իսկ 1941 թ. զործուղվել Մոսկվա՝ եռամյա Բարձրագույն կուսակցական դպրոց, որտեղ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի աստիճան:

1945 թ. վերադարձել է Երևան և աշխատանքի անցել Արտաքին գործերի ժողկոմատում որպես պատասխանատու ռեֆերենտ:

1951 թ. նշանակվել է եռամյա Բարձրագույն կուսակցական դպրոցի հայկական մասնաճյուղի ուսումնական գծով փոխտնօրեն՝ միաժամանակ լինելով ՍՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ:

Իր դասախոսությունների կիզակետում է գտնվել չարչրկված Հայկական հարցը՝ նորովի վերլուծություններով, անսքող պատմական անդրադարձներով, որի համար և որոշ երեսպաշտների բողոք-դիմումի համաձայն նրա հարցը քննվել է Մոսկվայում: Արդյունքում սահմանափակվել է պատմաբանի դասախոսությունների շրջանակը. այնուհետ պատմաբանը հայոց պատմության խոցելի հարցերին չպետք է անդրադառնար, Հայկական հարցը որպես այդպիսին տեղ չպիտի գտներ նրա դասախոսությունների ժամանակ: Սրան հաջորդել է մյուս քայլը. կրճատել են ուսումնական գծով փոխտնօրենի հաստիքը:

1960 թ. նա աշխատանքի է անցել Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող՝ չգիտակցելով (կամ գուցե շատ լավ ենթադրելով), որ այստեղ էլ գիտական աշխատանքով զբաղվելու «չափորոշիչներ» են սահմանված...

1960-ական թթ. նամակագրական կապ է հաստատել լեհ իրավագետ, հասարակա-

կան գործիչ, հրապարակախոս Բոգդան Գեմբարսկու հետ, նրա միջոցով լեհական մամուլում հրապարակել հոդվածներ, որոնցում պաշտպանել է Բ. Գեմբարսկու տեսակետները Հայկական հարցի արդարացի լուծման վերաբերյալ, մերկացրել քեմալական Թուրքիայի եւ Խորհրդային Ռուսաստանի՝ Հայաստանը Նախիջեւանից, Արցախից, Կարսի մարզից զրկելու հակահայկական դավադրական քաղաքականությունը:

Լեհաստանում տպված պրոֆ. Բոգովսկու՝ թուրքերին արդարացնող վերլուծությունների, ինչպես նաեւ XI բանակի «արջի ծառայությունների» վերաբերյալ Ն. Կարապետյանի հոդվածը կոմունիստական կուսակցության ղեկավարների նոր զայրույթն է առաջացնում: Նման դիրքորոշման եւ գործելակերպի համար Ն. Կարապետյանը հեռացվում է աշխատանքից, կուսակցությունից. 1962 թ. Պատմության ինստիտուտի կուսբյուրոյի որոշմամբ նրան զրկում են կուսակցական տոմսից:

Նույն տարում Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ղեկավարության որոշմամբ թերեւս «հայոց պատմության ստվերոտ կողմերը անաչառ լուսաբանելու համար» նրան ազատում են աշխատանքից:

Միայն վեց ամիս անց ակադեմիկոս, պատմության թանգարանի տնօրեն Մորուս Հասրաթյանին հաջողվում է «ոմանց» համոզել Կարապետյանին ընդունելու աշխատանքի Պատմության թանգարանում:

Իր ողջ գիտակցական կյանքում պատմաբանը ուսումնասիրել է Արեւմտյան Հայաստանում Ի դարի սկզբի ազատագրական շարժումների պատմությունը, թափանցել հայկական հարցի՝ որոշ պատմաբաններին ոչ հասու խորքեր, տվել ժամանակի քարացած ու զգուշավոր մթնոլորտում նոր վերլուծություններ, հանդես եկել նոր եզրահանգումներով:

Գրել է «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի 6-րդ հատորի (1981) «Արեւմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական դրությունը 1900-1908 թվականներին» բաժինը:

Նյութը, որ ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը, հայոց պատմության թերեւս ամենաճակատագրական պայմանագրին է վերաբերում: Իր մեկնաբանություններով, խիստ գնահատականներով այն, ինչ խոսք, չէր կարող հարգարժան պատմաբանի ապրած ժամանակաշրջանում հայրենիքում տպագրվելու բախտին արժանանալ:

Նյութը ներկայացնում ենք անփոփոխ՝ որոշ սրբագրական միջամտություններով: Ուստի եւ ծանոթագրություններ բաժնում պատմական անդրադարձներ կատարելով, ճշգրտելով հասարակական-քաղաքական մի շարք հասկացությունների ռուսերեն, օտարալեզու անվանումները, տալով հայերեն տարբերակները, փոքր-ինչ լուսաբանելով հոդվածում ակնարկված դեմքերը եւ դեպքերը, համարձակվել ենք տարիների հեռվից ներկայացնել հարգարժան պատմաբանի խոնարհումի արժանի աշխատանքը:

Ինչեւէ, ստորեւ ներկայացվող նյութը վերաբերում է հայերի համար բոլոր ժամանակներում գերակա միակ խնդրին. միացյալ, անկախ Հայաստանը վերգտնելու ձգտման հարատեւ խոչընդոտներին: Միացյալ Հայաստանի իրականացման համար նպաստավոր բոլոր պայմանները թվում էր առկա էին Առաջին աշխարհամարտից հետո: Հաղթանակած Անտանտի երկրները (Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան) պետք է պայմանագիր կնքեին պարտված Քառյակ միության երկրների, այդ թվում՝ Թուրքիայի հետ:

1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սեւր կոչվող արվարձանում Անտանտի երկրները Թուրքիայի հետ կնքեցին հաշտության պայմանագիր, որի մի քանի հոդվածներ վերաբերում էին Հայաստանին: Ըստ այդմ՝ Օսմանյան Թուրքիան պարտավորվում էր ճանաչել Միացյալ Հայաստանը: Հայաստանին էին անցնելու Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի նահանգները՝ 90.000 քառ. կմ, ելքով դեպի Սեւ ծով: ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը (որին էր վերապահվել հայ-թուրքական սահմանը որոշելը) նույն թվականին գծեց միացյալ, անկախ Հայաստանի քարտեզը: Սակայն, ցավոք, Սեւրի պայմանագիրը մնաց առկախ:

Այս եւ հետագա դեպքերի, իրադարձությունների անդրադարձն է: Ինքնագիրը բաղկացած է 35 A-4 չափսի էջերից:

ԱՐՄԻՆԵ ԱՍԱՏՐՅԱՆ

***

Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՔԵՄԱԼԸ, ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ԱՆՏԱՆՏԱՆ[1]
կամ՝ ԻՆՉՈՒ ՁԱԽՈՂՎԵՑ ՍԵՎՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Ընդունված է ասել, որ Հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանում խառնեց Անտանտայի հաշիվները: Այդ ճիշտ է միայն Սեւրի դաշնագիրը ձախողելու տեսակետից: Ուրիշ ոչինչ:

Բայց Սեւրի ձախողումն էլ ոչնչով չվնասեց Անտանտայի գլխավոր երկու տերությունների իմպերիալիստական քաղաքականությանը եւ նպատակներին, Անգլիային եւ ԱՄՆ-ին:

Ավելի շուտ Սեւրի տապալումը գլուխ եկավ Անգլիայի նախաձեռնությամբ եւ ջանքերով, թեեւ արտաքուստ այն տպավորությունն ու նախապաշարմունքն է ստեղծվել, թե Սովետական Ռուսաստանի ջանքերով Թուրքիան հասավ Սեւրի ձախողմանը:

Կասկածից վեր է, որ Քեմալին[2] հաջողվեց թուրքական նոր բանակ ստեղծել, սպառազինել, հանդերձավորել եւ ճնշել հայերի ու հույների, քրդերի ու արաբների ազատագրական շարժումները՝ շնորհիվ սովետական ոսկու, զենքի եւ բազմակողմանի զինված օգնության: Այդ փաստ է:

Սակայն սովետական այդ օգնությունն էլ չէր օգնի պարտված ու ջախջախված Թուրքիային ոտքի կանգնելու, եթե այդ չցանկանային Անտանտայի դայլերը, մասնավորապես Անգլիան եւ Ամերիկան:

Հոկտեմբերյան հեղաշրջման պատմական դերն այդ խնդրում ոչ այնքան ֆինանսական, ռազմական եւ դիվանագիտական-պրոպագանդիստական օգնությունն էր Քեմալին, որքան Անտանտայի պետական գործիչների գլուխներում ինչ գնով էլ լինի Թուրքիան պահպանելու եւ ուժեղ Թուրքիա ունենալու մտահղացում առաջ բերելը, որովհետեւ եթե այդ մտահղացումը չկազմեր Թուրքիայի նկատմամբ Անտանտայի կառավարությունների հետհոկտեմբերյան շրջանի քաղաքականության հիմքը, եւ նրանք շարունակեին Սեյկս-Պիկոյի[3] քաղաքականութ-

յունը, ապա ոչինչ չէր օգնի Թուրքիային խուսափելու բաժանումի սպառնալիքից՝ ոչ սովետական օգնությունը, ոչ էլ Քեմալի քաջությունն ու դիվանագիտական «հմտությունը»: Ինչպես միշտ սուլթանների օրոք, այնպես էլ Քեմալի ժամանակ Թուրքիայի դիվանագիտական, ռազմական եւ քաղաքական «հմտության» ու հաջողության գաղտնիքը պետք է տեսնել Անգլիայի վարքագծի մեջ: Անգլիական քաղաքականության հաղթանակն է, որ միամիտները շարունակ վերագրել են Թուրքիայի «խորամանկությանը» եւ «նուրբ դիվանագիտությանը»: Սա տգետ մոլորություն է, որի թակարդն են ընկել պատմական փաստերի միայն արտաքին կողմը տեսնելու ընդունակ մարդիկ, երեւույթների բուն խորքը թափանցելու անընդունակ մտքի տեր մարդիկ:

Հիրավի: Ի՞նչ էր Թուրքիան իրենից ներկայացնում 1917 թվականից հետո: Պատերազմից ծայրահեղորեն հյուծված եւ ուժասպառ եղած, իր բոլոր նվաճած երկրների ու ժողովուրդների վրա փաստական իշխանությունը կորցրած մի պետություն, որի բանակն ստիպված էր գլխապատառ նահանջել Բաքվից, Սիրիայից, Բալկաններից եւ ցաքուցրիվ լինել ամայացված Անատոլիայում, որի պատճառով էլ Էնվեր[4], Թալաաթ[5] եւ Ջեմալ[6] տրիումվիրատն[7] ստիպված եղավ 1918 թ. հոկտեմբերին Մուդրոսում[8] հաշտություն աղերսել Անտանտայից եւ զենքը վայր դնել: 15 օր չանցած ծունկի եկավ նաեւ Թուրքիայի մեծ դաշնակից «անպարտելի» Գերմանիան: Հարց է ծագում. այդ ինչպե՞ս եղավ, որ Գերմանիան չկարողացավ այլեւս ոտքի կանգնել եւ շարունակել դիմադրությունն Անտանտային, թեեւ խլվում էին նրա գաղութները, նրա վզին էին փաթաթում Վերսայլի[9] շղթաները, որոնց մի օղակն էր Սեւրը: Մի՞թե Գերմանիայում ավելի վատ դիվանագետներ կային, քան Քեմալը, մի՞թե Կառլ Լիբկնեխտն[10] ավելի պակաս հեղափոխական եռանդ ու կազմակերպչական տաղանդ ուներ, քան Քեմալ փաշան, մի՞թե գերմանական պրոլետարիատը, գյուղացիությունը եւ մտավորականությունն ավելի պակաս հայրենասերներ ու արժանապատվության զգացում ունեին, քան թուրքական բանվորները, գյուղացիները եւ մտավորականությունը, մի՞թե Գերմանիայում ավելի պակաս հող կար համաշխարհային հեղափոխության համար, քան Թուրքիայում, մի՞թե թուրքերն ավելի անկեղծ ու ջերմեռանդ էին տոգորված իմպերիալիստական Անտանտայի դեմ հեղափոխական-ազատագրական պայքար մղելու գաղափարներով, քան գերմանացիները, վերջապես մի՞թե թուրքերն ավելի լավ ու իրենց սրտին մոտ ընդունեցին մարքսիզմը[11] եւ Լենինին[12], քան գերմանացիները: Ինչո՞ւ ուրեմն Գերմանիային չհաջողվեց Կոմպլենից[13] հետո ազատագրական հակավերսալյան, հակիմպերիալիստական շարժում սկսել, իսկ Մուդրոսից հետո այդ հաջողվեց Թուրքերին՝ Քեմալ փաշայի ղեկավարությամբ: Ինչո՞ւ գերմանացիները չկարողացան ճախողել Վերսայլի պայմանագրի իրագործումը, իսկ Թուրքերին հաջողվեց ճախողել Սեւրի դաշնագիրը:

Ով ուզում է իմանալ այս հարցերի պատասխանը, նա պետք է քայլ առ քայլ ուշադիր քննի 1917 թվականի հոկտեմբերից ի վեր Անգլիայի քաղաքականության ընթացքը: Ամբողջ գաղտնիքը նրանում է, որ 1917 թ. Ռուսաստանում սովետների[14] հաղթանակից հետո, Անգլիան վերանայում է իր արտաքին քաղաքականության կուրսը: Պատմական ասպարեզում սովետական դիկտատուրայի երեւալը հարկադրում է Անտանտայի դայլերին եւ առաջին հերթին Անգլիային գնահատելու քաղաքական նոր գործոնի երեւան գալը որպես թշնամի N 1 : Թուրքիան ու Գերմանիան մղվում են երկրորդական պլանի վրա: Զմոռանալով պատերազ-

մում իր թշնամիների նկատմամբ տարած հաղթանակի պտուղները քաղելու մտադրությունները՝ Անգլիան մտածում է այն մասին, թե ինչպես վնասազերծել Ռուսաստանում բռնկված հեղափոխության համաճարակը եւ ի վերջո վերացնել այդ վարակի օջախը: Այս խնդիրը դրվում է Անգլիայի արտաքին քաղաքականության հիմքում: Եւ նա սկսում է կազմակերպել Անտանտայի ուժերն ու ջանքերն այդ ուղղությամբ ծառայեցնելու համար:

Սկզբում փորձեց ռուսական հակահեղափոխության ձեռքերով խեղդել նորածին թշնամուն: Բայց երբ տեսավ, որ ռուսներն անընդունակ են այդ միսիային[15], որոշեց անցնել տեւական պաշարման եւ հարմար մոմենտին[16] գրոհելու եւ սովետները ջախջախելու տեւական ստրատեգիական պլանի:

Դրա համար անհրաժեշտ էին հարվածող ուժեր եւ հարմար ելման դիրքեր (պլացդարմներ)[17] ստեղծել:

Հարմարագույն եւ պատրաստակամ ուժեր էին հենց նոր պարտված թշնամիները՝ Գերմանիան եւ Թուրքիան:

Երկուսն էլ դարավոր թշնամիներ են եղել Ռուսաստանին եւ ամենից շատ հարբած՝ դեպի արեւելք շարժվելու՝ Մերձբալթիկան, Ուկրաինան, Ղրիմը եւ Կովկասը զավթելու համար:

Եւ ահա, Վերսայլում Անտանտայի տերությունները հավաքվել են միմյանց մեջ բաժանելու պարտված Թուրքիայի ու Գերմանիայի ժառանգությունը՝ գաղութները եւ նույնիսկ մետրոպոլիան[18]:

Գերմանիայի նկատմամբ ԱՄՆ-ը եւ Անգլիան համաձայն են խլել գաղութները, ձեռք չտալ մետրոպոլիայի ամբողջականությանը, վերցնել միայն ռեպարացիաներ[19] եւ դեմիլիտարիզացիայի[20] ենթարկել Հռենոսի մարզը: Մինչեւ որ Գերմանիան կհասունանա, կդառնա իսկական մի հակակոմունիստական բռունցք Եւրոպայի կենտրոնում, որպեսզի անհրաժեշտության դեպքում ուղղեն նրան Սովետական Ռուսաստանի դեմ: Դրա համար հնարավորություն պետք է ընձեռել Գերմանական միլիտարիզմին[21] վերականգնելու իր ուժերը եւ երկրում արմատախիլ անելու կոմունիզմի[22] հիվանդությունը:

Ֆրանսիան համաձայն է այս պլանին[23], բայց գերմանական ռազմական մեքենայից ավելի շատ տուժած լինելով եւ նոր հարձակման վտանգից խուսափելու համար պահանջում է Էլզաս-Լոթարինգիան եւ Սաարը միացնել Ֆրանսիային: Կլեմանսոյի[24] ջանքերով Ֆրանսիան հասնում է իր նպատակին Գերմանիայի հարցում: Բայց 1920-1939 թթ. ընթացքում, հանուն հակասովետական ընդհանուր ստրատեգիայի շահերի, աստիճանաբար Ֆրանսիան զիջումներ է անում Գերմանիային՝ Անգլիայի եւ ԱՄՆ-ի ճնշման տակ: 20 տարվա ընթացքում ամերիկյան, անգլիական եւ ֆրանսիական իմպերիալիզմի դայակի ձեռքերով սնվում ու զորանում է Եւրոպայի կենտրոնում հակակոմունիստական հիտլերյան Գերմանիան: Ֆաշիստական գազանի զորացմանը չեն կարողանում խանգարել ո՛չ կոմինտերնը[25], ո՛չ Ստալինի[26] դավադրությունները եւ խորամանկությունը:

Թուրքիայի հարցում Անտանտայի խոշոր դայլերը որոշում են հրաժարվել Թուրքիան բաժան-բաժան անելու նախորդ պլանից, բայց Թուրքիայից վերցնել նրա բոլոր գաղութները, որոնք չեն առնչվում Ռուսական կայսրության սահմանների հետ: Հակասովետական պլացդարմի համար ամենահարմարն այն է, որ Անատոլիական թերակղզու սահմաններում ամփոփվի Թուրքիան, իսկ արաբական երկրներում պլացդարմ ստեղծելու հոգսը դաշնակիցները վերցնեն իրենց վրա՝ տիրելով այդ երկրներին:

Անատոլիական Թուրքիան բաժան-բաժան անելը կարող էր (արդեն զգացվում էր) մի կողմից դժգոհություն առաջացնել դաշնակիցների միջեւ (Իտալիան ուզում էր Զմյուռնիան, որի վրա աչք ուներ եւ Հունաստանը, Արեւմտյան Հայաստանում պիտի վերականգնվեր Հայկական պետություն, որը թեեւ պիտի գտնվեր ԱՄՆ-ի մանդատի տակ, բայց Ամերիկան դժգոհ էր, չէր ուզում, պահանջում էր մանդատը տարածել նաեւ ամբողջ Անդրկովկասի եւ Թուրքիայի վրա, որի հետ չէր կարող համաձայնել ոչ Անգլիան, ոչ էլ Ֆրանսիան՝ գտնելով չափից դուրս մեծ ԱՄՆ-ի ախորժակը: Իսկ որ գլխավորն է՝ ո՞վ է հասկանում այդ հայերին. երբեք չեն հակադրվել ռուսներին, միշտ էլ հանդիսացել են ռուսական արեւելյան քաղաքականության երկրպագուներն ու նվաճողական բանակի ավանդարդը[27]: Հիմա էլ, տակավին պետականության չհասած, որդեգրել են համաշխարհային պրոլետարական հեղափոխության լոզունգները եւ պատրաստակամություն են հայտնում զոհաբերել ողջ հայ ժողովուրդը եւ Հայաստանը այդ հեղափոխության շահերին: Իր միջավայրում նման անհեթեթ զառանցանքներ ու բանդագուշանքներ, ինքնակամ զոհվելու եւ իբրեւ ազգություն վերանալու անոորմալ եւ թեթեւամիտ մտայնություն հանդուրժող ազգի ու ժողովրդի վրա կարելի՞ է հույս դնել, վստահ լինել, որ նա կարող է պլացդարմ դառնալ Սովետական Ռուսաստանի դեմ: Հազիվ թե: Ձպետք է ռիսկի ենթարկվել), մյուս կողմից էլ ջլատել Թուրքիայի ուժերը, որը Մերձավոր Արեւելքում ամենավստահելի հակառուսական ուժը եւ պլացդարմը կարող է դառնալ: Ուրեմն ինչ գնով էլ լինի պետք է առայժմ հրաժարվել Թուրքիան բաժան-բաժան անելու մտքից, թույլ տալ, որ պարտված Թուրքիան Անատոլիական թերակղզու վրա վերականգնի իր ուժերը եւ դառնա հակասովետական միլիտարիստական երկրորդ բռունցքը Ռուսաստանի հարավ-արեւմուտքում:

Բայց համաշխարհային հասարակական կարծիքի եւ սեփական ժողովուրդների աչքի առաջ ինչպե՞ս բացարձակ կերպով մերժել Ապրիլյան եղեռնի ենթարկված հայերի պահանջները՝ Հայաստանը Թուրքիայի ճիրաններից ազատագրելու եւ հայկական պետություն ստեղծելու մասին:

Ձէ՞ որ բազմիցս խոստումներ էին արել Անտանտայի կառավարությունները, որ հայերի ազգային պահանջները պետք է բավարարվեն: Նման խոստումներ էին արվել նաեւ հույներին եւ այլ ճնշված ժողովուրդներին: Ուրեմն չէր կարելի բացահայտ կերպով անտեսել այդ ժողովուրդների շահերը եւ իրենց խոստումները: Հարկավոր էր այնպես տանել գործը, որ Թուրքիան վերածնվեր, ճախողվեր Սեւրի պլանը, բայց հակացվեր բոլորի կողմից, որ դա կատարվեց ո՞չ Անտանտայի մեղքով, ո՞չ Անգլիայի մեղքով:

Եւ դարձյալ անգլիական իմպերիալիզմի փորձված դիվանագիտությունը հեռատես գտնվեց նաեւ այս խնդրում. նա գտավ ելքը: Այդ ելքը հենց այն մտահղացումն էր, որ նրան ներշնչեց Սովետական հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանում 1917 թվականին: Ավելի ճիշտ հոկտեմբերը միայն նպաստեց այդ մտահղացման հասունացմանը եւ կոնկրետ գործնական նոր քաղաքական-ստրատեգիական պլան կազմելու հիմքը դրեց, քանի որ մինչեւ Թուրքիայի պարտվելը անգլիական քաղաքագետների եւ ստրատեգների գլուխներում հղացել էր այդ միտքը:

Հրաշալի ճանաչում էին անգլիացիները թուրքերին, գիտեին, որ նրանք ճարպիկ ռեւոլյուցիա[28] խաղացողներ են Թուրքիայի համար ճգնաժամային մոմենտներին: Գիտեին, որ

թուրքական «ռեւոլյուցիաները» սովորական զինվորական պալատային հեղաշրջումներ են եւ ուրիշ ոչինչ, որոնք չնայած եւրոպական սահմանադրական ազատությունների լոզունգներով ու գաղափարներով են հանդես գալիս, բայց իրականում ոչնչով չեն տարբերվում միջնադարյան պալատական հեղաշրջումներից, չեն շոշափում երկրի դարավոր սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կարգերն ու դավանական-բարոյական նորմերը[29], ժողովրդի եւ կառավարող դասակարգերի միջեւ սահմանված հարաբերություններն ու նորմերը: Մի խոսքով՝ թուրքական «հեղափոխությունները» ոչ մի ընդհանուր բան չունեն եւրոպական հեղափոխությունների հետ, թուրքական ըմբռնումները ազատության, դեմոկրատիայի եւ իրավահավասարության մասին չունեն այն բովանդակությունը, ինչ որ եւրոպացիների մոտ: Եւրոպական հասկացողությունների կեղեւի տակ մնում են կարծրացած նույն Ղուրանի[30] դոգմաները[31], նույն մահմեդական ֆանատիզմի[32] նորմերը, հոգեբանությունը եւ սոցիալ-տնտեսական, ֆեոդալական հարաբերությունները:

Այլ խոսքով՝ խալիֆներն[33] ու սուլթանները[34], կառավարություններն ու առաջնորդներն են փոփոխվում, մեկին հաջորդում է մյուսը, իսկ Թուրքիան՝ իր կարգերով, գաղափարախոսությամբ ու էությամբ, մնում է նույն արյունկզակ բորենին, առաջադիմությանն ու դեմոկրատիային[35] խորթ ու թշնամի պարազիտը[36]:

Թող որքան ուզում են թուրքական փաշաներն ու մտավորականությունը ճղճղան հեղափոխական լոզունգներով, ճառերով եւ խոստումներով, դրանք միայն միամիտներին մոլորեցնելու եւ նրանց աչքերին թող փչելու համար են, բայց ո՞չ անգլիական քաղաքագետների: Նրանք լավ են հասկացել թուրք առաջնորդների այդ հոխորտանքների արժեքը:

Հնդկաստանում ձեւավորվող եւ Միջագետք՝ Թուրքիայի դեմ պատերազմելու ուղարկվող բանակային կորպուսի[37] սպայական կազմի համար մշակված հրահանգի մեջ անգլիական ստրատեգները[38] տակավին 1917 թվականին կետ առ կետ ծանոթացնում էին իրենց սպաներին, թե ինչ է իրենից ներկայացնում Թուրքիան, թուրք ժողովուրդը, թուրք մտավորականությունը:

Հրահանգում զգուշացվում էր սպայական կազմը, որ Թուրքիայում ճգնաժամի պահին հնարավոր է, որ թուրք ղեկավարները դիմեն իրենց փորձված «ռեւոլյուցիա խաղալու» մեթոդին եւ հնարեն ինչ-որ հեղափոխություն Թուրքիայում, որպեսզի թող փչեն եւրոպացի ազատամիտների աչքերին եւ դրանով իսկ համակրանք հայցեն համաշխարհային առաջադեմ հասարակական կարծիքից: Անգլիական սպան եւ զինվորը պարտավոր են հաշվի առնել թուրքերի այդ սովորությունը եւ իրենց համար անտեղի իլյուզիաներ չստեղծեն՝ թուրքերի այդ աչքակապությունն ընդունելով որպես իրական արժեք ներկայացնող ինչ-որ դեմոկրատիա՝ եւրոպական հասկացողությամբ, եւ անտեղի համակրանքով լցվեն դեպի թուրքերի այդ «ռեւոլյուցիոն խաղը»: Բոլոր դեպքերում թուրք ժողովուրդը չի հասկանում եւ չի պատկերացնում եւրոպական իմաստով դեմոկրատական ազատություն եւ իրավունքներ ասված բանը, ուստի նա չի կարող պայքարել դրանց համար: Նա կուրորեն գնում է իր առաջնորդների ետեւից, նրանց ետեւից, ովքեր երեւում են հրապարակի վրա եւ կենտրոնից հրամաններ են արձակում: Ուրիշ ոչինչ:

Ահա թե ինչու միանգամայն բնական եւ հավանական պիտի համարել այն ենթադրությունը, թե Քեմալական շարժման իսկական հրահրողները իրականում եղել են անգլիացիները:

Պոլսեցի ծերուկ ներգաղթած .....ը[39], որի հետ անցյալ ամառ Դիլիջանում հանդիպել եմ, մանրամասն պատմեց, թե ինչպես Ռըզա բեյը[40] Քեմալ փաշային եւ ուրիշ 6 հոգու թաքցրեց իր բնակարանում, երբ Պոլսում անգլիական զինվորական իշխանություններն սկսել էին ձերբակալել թուրքական կառավարության ղեկավարներին եւ պառլամենտի[41] անդամներին՝ որպես պատերազմական հանցագործների դատի տալու համար (Թուրքիայի պարտությունից հետո), եւ հաջորդ օրը հանձնարարեց իրեն՝ հայ ախոռապանին, եւ Ռըզա բեյի եղբորը՝ գիշերով այդ 7 հոգուն ձիերով փախցնելու Անատոլիա[42]՝ մինչեւ Անկարա[43]: Եւ ինքը կատարել է այդ միսիան: Դեռեւս տանը, այդ թաքցված 7 փաշաների հետ ունեցած զրույցի պահին, Ռըզա բեյից լսել է, որ անգլիական հրամանատարության եւ դիվանագիտության պատասխանատու անձերից, որոնց հետ ինքը շատ մոտ է իր անգլոֆիլության[44] պատճառով, ստացել է կշտամբանք, թե ինչու են թուրք ղեկավարները պարտությունից հետո գլուխները կորցրել:

-Հապա ի՞նչ անեն,- հարցրել է Ռըզա բեյը:

Անգլիացի բարեկամները նրան հասկացրել են, որ թող թուրքերը Անատոլիայի խորքերից ազատագրական շարժում սկսեն եւ շարժվեն դեպի Պոլիս. ոչ ոք նրանց չի դիմադրելու, թող գան գրավեն մայրաքաղաքը, նոր կառավարություն կազմեն: Խոսքը վերաբերում է նոր մարդկանց, որոնք պատերազմի ընթացքում քիչ են արատավորվել որպես ջարդարարներ:

Եւ Ռըզա բեյը փախցնելով այդ 7 փաշաներին՝ փաստորեն սկիզբ դրեց այն շարժմանը, որը հայտնի դարձավ Քեմալի անունով, թեեւ իրականում ճիշտ կլիներ Ռըզա բեյի կամ անգլիական շարժում անունը դնել: Շարժման պլանն էլ մշակվեց հենց Ռըզա բեյի տանը՝ նույն գիշերը:

Այստեղից թուրքերը հասկացան, որ թուրք ղեկավարների եւ պառլամենտի անդամների ձերբակալություններն էլ ձեւական բան են, համաշխարհային հասարակական կարծիքը խաբելու համար: Զէ՞ որ գլխավորները փախան Բեռլին, Մոսկվա, Թիֆլիս ու Բաքու, իսկ մյուսները, որոնք ձերբակալվեցին, դատապարտվեցին եւ Մալթա կղզի աքսորվեցին, կարճ ժամանակից հետո նրանք էլ ազատ արձակվեցին եւ միացան Քեմալի սկսած շարժմանը, անցան Անդրկովկաս եւ Միջին Ասիա՝ համիսլամական նոր շարժում կազմակերպելու, Հայաստանի դեմ նոր պատերազմ նախապատրաստելու, Թուրքիայի ամբողջականությունը պաշտպանելու համար եւ այլն:

Անգլիացիների ստրատեգիական եւ քաղաքական հեռատես պլանները լիովին արդարացրին իրենց: Թուրքիան մնաց երախտապարտ խորամանկ Ալբիոնին[45]: Լոնդոնում թուրքերը պիտի հատուցեն այդ պարտքը: Եւ հատուցեցին:

Թուրքիայի ժառանգությունը բաժան-բաժան անելու հարցում Անտանտայի պետությունների միջեւ ծագած գժտությունները չխանգարեցին, այլ ավելի նպաստեցին անգլիական ռազմաքաղաքական այս ստրատեգիական պլանի իրականացմանը: Անատոլիական Թուրքիան պահպանելու դիմաց Ֆրանսիան պահանջում էր Սիրիան եւ Լիբանանը՝ հավակնություն ունենալով նաեւ տիրել Մուսուլին[46]: Բացի դրանից Ֆրանսիան ձգտում էր մենաշնորհներ ստանալ «նոր» Թուրքիայում կապիտալի ներմուծման եւ առեւտրի հարցերում: Վերջինիս դիմաց Ֆրանսիան խոստացավ եւ հատուկ համաձայնագրով Քեմալի հետ Կիլիկիայից

դուրս բերեց իր զորամասերը՝ Թուրքերի ողորմածությանը հանձնելով Կիլիկիայի հայության ճակատագիրը:

Քեմալական հորդաները հրի եւ սրի մատնեցին Հաճընը եւ Կիլիկիայի մնացած հայությունը:

Դրանից առաջ Իտալիան, խռովելով Վերսայլի պայմաններից, որ իրեն բաժին չեն հանում Գերմանիայի եւ Թուրքիայի գաղութներից, մանավանդ չհամաձայնվեցին իրեն հանձնել Զմյուռնիան, որոշեց առաջինը բացահայտ գործարքի մեջ մտնել Քեմալի հետ: Խոստացավ եւ զինեց քեմալական նորաստեղծ բանակը ժամանակակից զենքերով:

Իտալիայի եւ Ֆրանսիայի այդ թուրքոֆիլ քայլերին որպես պատասխան՝ Անգլիան հրաժարվեց որեւէ զորամաս մտցնել Հայաստան՝ որպես օգնություն հայերին թուրք-քրդական եւ աղրբեջանական դավաղրությունից նորաստեղծ հանրապետությունը պաշտպանելու համար: Ավելին՝ պահանջեց Անդրանիկից, որ չմտնի Ղարաբաղ, չանցնի Կարսի ուղղությամբ Արեւմտյան Հայաստան եւ չմտնի Նախիջեւան՝ պատճառաբանելով, թե դաշնակիցները խաղաղ ճանապարհով պիտի «միավորեն» Հայաստանի հողերը: Քեմալը շատ լավ էր հասկանում անգլիացիներին, ուստի եւ պատրաստակամությամբ համաձայնեց, որ Մուսուլը մնա անգլիացիներին: Ամերիկայում այլեւս ավելորդ էին համարում Հայաստանի մանդատով հետաքրքրվել, քանի որ դաշնակիցներով որոշել էին անկախ եւ բավականաչափ ուժեղ Թուրքիա ստեղծել Անատոլիայում: Եւ Ամերիկյան սենատը առանց հապաղելու մերժեց Հայաստանի մանդատի ընդունումը: Այնպես որ 1918-1920 թվերի ընթացքում Անտանտայի մեծ տերությունների եւ Թուրքիայի միջեւ տերիտորիալ[47] վեճերն ու խնդիրները հիմնականում լուծված էին, Թուրքիայի հողի վրա միայն Պոլսում տակավին մնում էին կանգնած անգլիական ռազմանավերը, այլեւս օտարերկրյա օկուպացիոն զորքեր չէին մնացել:

Թուրքերի հետ ներքին համաձայնության գալով՝ մեծ ավազակները հասկացնել տվին թուրքերին, որ այլեւս իրենք կարող են Անատոլիան մաքրել հայերից եւ հույներից, որոնց խոստացված են Սեւրի դաշնագրով որոշ նահանգներ Արեւմտյան եւ Արեւելյան Անատոլիայում:

Այսպիսով Քեմալական ազգային շարժումը պետք է չափվեր արեւելքում հայերի, իսկ արեւմուտքում հույների հետ. առանց հույներին եւ հայերին ռազմի դաշտում պարտության մատնելու՝ անհնարին էր ազատվել Սեւրի սպառնալիքից: Բայց եւ դժվար չէր այդ հաղթանակը ձեռք բերելը, քանի որ անսպասելի կերպով Թուրքիայի երեկվա հզոր թշնամիներն այլեւս իր բացահայտ եւ քողարկված բարեկամներն էին (հանձինս Սովետական Ռուսաստանի, Իմպերիալիստական Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի եւ Ամերիկայի):

Բեռլին փախած «Երիտասարդ Թուրքերի» պարագլուխները՝ Էնվեր, Թալաաթ, Խալիլ[48], Ջեմալ փաշաները, Շաքիր աղան[49], դ-ր Նազըմ բեյը[50] եւ ուրիշները անմիջապես հյուրընկալվեցին Բեռլինում գտնվող սովետական դիվանագիտական եւ քաղաքական հատուկ միսիայի ներկայացուցիչներ Իոֆեի[51] եւ Ռադեկի[52] կողմից: Նախնական բանակցություններից հետո Ռադեկը եւ Իոֆեն Մոսկվա են առաքում Էնվեր, Ջեմալ, Խալիլ փաշաներին: Սրանք անմիջապես կոնտակտի[53] մեջ են մտնում Չիչերինի[54], Կարախանի[55], Ստալինի, Զինովեւի[56] եւ Լենինի հետ: Վախենալով, թե դաշնակցական կամ սոսկ հայ վրիժառուի գնդակը կարող է իրեն խոցել՝ Էնվերը Ստալինի խորհրդով ծպտվում է Կարախանի տանը: Բանակցությունն-

ները պսակվում են լիակատար փոխըմբռնողությամբ եւ համաձայնությամբ: Էնվեր փաշան ոգեշնչված նամակ է գրում Քեմալ փաշային՝ ոգեւորելով վերջինիս սկսած շարժման հաջողության մեջ, վստահեցնելով, որ հանձին Սովետական Ռուսաստանի՝ Թուրքիան ունի իր հզոր ու նվիրված դաշնակիցը, որը խոստանում է ամեն տեսակի օգնություն, եւ որ ինքը արդեն հաջողացրել է կես միլիոն ռուբլի ոսկի ստանալ սովետական կառավարությունից, որն ինքն ուղարկում է Տրապիզոնի վրայով իրեն՝ Քեմալին՝ նոր բանակ կազմակերպելու համար:

Քեմալն իր հերթին անմիջապես Մոսկվա է առաքում Բեքիր Սամիին[57], իսկ Բաքու՝ Աղաեւին[58]: Իրենց հերթին Էնվեր, Խալիլ եւ Ջեմալ փաշաները եռանդուն գործունեություն են ծավալում Ղրիմում, Հյուսիսային Կովկասում, Թիֆլիսում, Բաքվում եւ Միջին Ասիայում՝ համիսլամական կամ համաթուրքական միացյալ ճակատ ստեղծելու եւ թուրքական շարժմանը օգնություն ցույց տալու, Թուրքիան ծվատվելուց փրկելու համար:

Սովետական կառավարությունն անհապաղ Անկարա է առաքում նախ՝ Ֆրունզեին[59], ապա՝ Էլիավային[60], Արալովին[61] եւ Աբելովին՝ որպես դիվանագիտական եւ զինվորական ներկայացուցիչներ: Նոր թուրքական զինված ուժեր ստեղծելու համար Իտալիան զենք է տալիս, Մոսկվան ե՛ւ զենք, ե՛ւ ոսկի, ե՛ւ կամավորներ է հավաքում, զինվորական մասնագետների միջոցով Բաքվի հատուկ պոլիգոններում[62] այդ կամավորներից հատուկ գնդեր ձեւավորում, զինում, հանդերձավորում եւ Խալիլ փաշայի ու կոմունիստ Մուստաֆա Սուբխիի[63] գլխավորությամբ ուղարկում Կարաբեքիր[64] փաշայի հրամանատարության տակ արեւելյան(Հայաստանի դեմ) ճակատում մարտնչելու համար:

Եւ որպեսզի Մոսկվան չինայի ոչինչ, առատորեն ոսկի, զենք ու հանդերձանք մատակարարի Քեմալին, որպեսզի թուրքոֆիլ պրոպագանդայի օգտին ծառայի բոլշեւիկյան ամբողջ հեղափոխական հզոր պրոպագանդայի մեքենան, Քեմալը հավաստիացնում է Լենինին, թե ինքը մտադիր է Անտանտայի, միջազգային իմպերիալիզմի դեմ ոտքի հանել ամբողջ մահմեդական աշխարհը, հատկապես անգլիական իմպերիալիզմի դեմ եւ խոստանում է անհրաժեշտ օգնության եւ պաշտպանության դեպքում ոտքի հանել Արեւելքն Արեւմուտքի դեմ, եւ գլուխ բերել անգլիական իմպերիալիզմի կործանումը:

Մոսկվայից Քեմալն ստանում է բազմակողմանի՝ ֆինանսական, ռազմական, դիվանագիտական եւ պրոպագանդիստական ու ինֆորմացիոն վիթխարի մասշտաբների[65] օգնություն: Այդ օգնության շնորհիվ պարտված եւ քայքայված թուրքական բանակը կրկին վերականգնվում է՝ ավելի մարտունակ եւ ավելի հանդերձավորված ու սպառազինված տեսքով, նվաճողական ձգտումներով ու վրեժխնդրության ոգով լցված, տարված պանիսլամիզմի[66] ու պանթուրքիզմի գաղափարներով, Մեծ Թուրքիա ստեղծելու հեռանկարներով:

Ինչո՞ւ Մոսկվան շահագրգռված էր զինել Թուրքիային: Մի՞թե Լենինն այդքան միամիտ էր, որ հավատար, թե իրոք թուրքական փաշաները դարձել են պրոլետարական համաշխարհային հեղափոխության առաջամարտիկներ ու դրոշակակիրներ: Ո՛չ, իհարկե: Ռուսական բոլշեւիկների կառավարության ղեկավարներն այդքան միամիտներ չէին: Համենայն դեպս դասակարգային պայքարի մարքսյան ուսմունքը նրանք լավ էին տիրապետում եւ գիտեին, որ փաշաների ղեկավարած թուրքական «հեղափոխությունը» պրոլետարական կոմունիստական հեղափոխություն չէ:

Ավելին: Նրանք հասկանում էին, որ թուրքական շարժման ղեկավար խավերը՝ ազգային

բուրժուազիան եւ ֆեոդալները, որոշ էտապում իրենց դասակարգային բնազդով հակվելու են դեպի իմպերիալիստական տերությունները՝ նրանց հետ գործարքի մեջ մտնելով ընդդեմ հենց կոմունիստական շարժման եւ սովետական կարգերի: Չնայած դրան՝ Մոսկվան այնուամենայնիվ դարձավ Քեմալի դաշնակիցը՝ պաշտպանելով եւ օգնելով նրան՝ իրագործելու իր ծրագիրը, ստեղծելու «նոր», ուժեղ Թուրքիա:

Լենինի եւ Ստալինի թուրքոֆիլ քաղաքականության եւ ստրատեգիայի հիմքում ընկած էին հետեւյալ ռեալ հաշիվները.

ա) Սովետական Ռուսաստանին հարկավոր էր թեկուզ որոշ ժամանակով բարեկամ շահել արտաքին աշխարհում, թեկուզ դա լիներ Թուրքիան: Դիվանագիտական եւ իրավական ճանաչում գտնել արտաքին աշխարհի որեւէ տերության կողմից, թեկուզ դա լիներ Անգլիայի կողմից գաղտնի խրախուսվող, Իտալիայի եւ Ֆրանսիայի կողմից արդեն գործնականորեն ճանաչված նոր Քեմալական Թուրքիայի կողմից: Այդպիսի թեկուզ ժամանակավոր բարեկամական տերություն ունենալը հարավից կենսական նշանակություն ուներ Սովետական Ռուսաստանի համար: Թուրքիայի բարեկամությունը շահելու համար անհրաժեշտ էր ճանաչել այդ Թուրքիան եւ պաշտպանել ու օգնել նրան ֆինանսապես եւ ռազմական ու դիվանագիտական տեսակետից, թեկուզ դա լիներ 4 տարվա պատերազմի եւ 3 տարվա քաղաքացիական ավերիչ կռիվների հետեւանքով քայքայված, սովի ու աղքատության մատնված երկրի ու ժողովրդի հաշվին:

բ) Սովետական Ռուսաստանը ոչ մի կերպ չէր կարող հանդուրժել, որ Ռուսական կայսրության սահմանները նեղանան: Մինչդեռ Արեւմուտքում Լեհաստանն էր անկախ պետություն դարձել եւ դուրս եկել Ռուսաստանի կազմից, Մերձբալթյան երկրներն էին անկախություն հռչակել եւ դուրս եկել Ռուսաստանի կազմից, Ֆինլանդիան անկախություն էր նվաճել եւ դուրս եկել Ռուսաստանի կազմից: Այս ժողովուրդներին Ռուսական կայսրության շրջանակներում կարելի էր պահել միայն զենքի ուժով: Բանակ շարժել այդ ժողովուրդների դեմ, կնշանակեր վարկաբեկել Հոկտեմբերյան հեղափոխության հռչակած ազգերի ինքնորոշման լոզունգը: Ուրեմն պետք էր հաշտվել կատարված անջատման փաստի հետ, ուստի եւ ատամները կռճտացնելով ստորագրվեցին դեկրետներ այդ երկրների անկախությունը ճանաչելու վերաբերյալ:

Ռուսաստանի հարավում ու Անդրկովկասում նույնպես անկախ ռեսպուբլիկաներ[67] էին հռչակվել Վրաստանը, Ադրբեջանը եւ Հայաստանը: Իսկ Ռուսաստանն առանց Անդրկովկասի չէին կարող պատկերացնել Սովետական Ռուսաստանի ղեկավարները, մանավանդ որ այդ երկրամասում հսկայական ջանքեր էին թափել բոլշեւիկները՝ իշխանության համար մղած պայքարում: Չէր կարելի երեւակայել ՌԿՊ(բ)՝ առանց Անդրկովկասյան երկրամասի կազմակերպությունների: Ճանաչել Անդրկովկասի երեք հանրապետությունների անկախությունը, կնշանակեր, որ Ռուսաստանը կորցնում է ոչ միայն իր մարգարիտը, այլեւ իր մարտական բոլշեւիկյան կազմակերպությունները: Ահա թե ինչու ռուսական բոլշեւիկներն իրենց ծրագրում Անդրկովկասի ժողովուրդների վրա չէին տարածում ազգերի ինքնորոշման իրավունքը, չէին նախատեսում ճանաչել նրանց անկախության իրավունքը՝ համարելով Անդրկովկասը Ռուսաստանի բնական եւ անբաժանելի մասը: Ուրեմն ինչ գնով ուզում է լինի, պետք էր պայքարել այդ երկրամասում սովետական կարգեր հաստատելու համար: Եթե ներքին ուժե-

բով գլուխ չէր գա գործը, ուրեմն հարկավոր էր դիմել ինտերվենցիայի[68] եւ զենքի ուժով ոչնչացնել երկրամասի ազգային հանրապետությունների անկախությունը, տապալել նացիոնալիստական[69] կառավարությունները:

Սակայն, ինչպես ասվեց վերեւում, Լեհաստանի եւ Մերձբալթյան երկրների կապակցությամբ, բացահայտ ինտերվենցիա կազմակերպելը նպատակահարմար չէր:

Պետք էր գտնել մի ոչ սովետական հարվածող ուժ, որը զենքի ուժով ստիպեր քաղաքական ասպարեզից հեռանալ Անդրկովկասի հանրապետությունների իշխանության գլուխ անցած ազգային կուսակցություններին: Ի տարբերություն Ռուսաստանի արեւմտյան սահմանների՝ Անդրկովկասի սահմանների վրա հայտնվեց այդ ուժը՝ հաճին քեմալական «հեղափոխության»: Ահա թե ում ձեռքերով կարելի էր գլուխ բերել Անդրկովկասի խորհրդայնացման գործը: Կարելի էր օգնել Քեմալին ոսկով, զենքով, հանդերձանքով եւ ռազմական մասնագետներով ու նույնիսկ զորքով, որպեսզի ստեղծվի նոր թուրքական բանակ, որը պատրաստակամությամբ կարող էր հարձակվել Հայաստանի վրա՝ ստիպելով նրան հրաժարվելու Սեւրի պահանջներից, իսկ լավագույն դեպքում՝ զավթել նաեւ Արեւելյան Հայաստանը կամ նրա մի մասը եւս:

Այսպիսով համաշխարհային հասարակական կարծիքի աչքում անմիջապես ինտերվենտներ ու ագրեսորներ[70] կերեւային թուրքերը եւ ոչ թե Սովետական Ռուսաստանը, որը հանդես կգա միջնորդի դերում՝ հայ-թուրքական նոր կոնֆլիկտը[71] կարգավորելու միսիայով:

Իսկ այդ միջնորդության գինը կլինի այն, որ Հայաստանի կառավարությունից կպահանջեն կատարել այնպիսի քայլեր, որոնցից նա անխուսափելիորեն պիտի հրաժարվեր, այլապես նա դավաճանած կլիներ հայ ազգային-ազատագրական պայքարի շահերին: Այդպիսով ձեւական հիմք կունենային Հայաստանի կառավարությանը մեղադրելու «իմպերիալիստական ձգտումների», «քաղաքական ավանտյուրայի»[72], «Սովետական Ռուսաստանի նկատմամբ թշնամական դիրք գրավելու», «Անտանտայի գործակալ» եւ նման հազար ու մի մեղքերի մեջ մեղադրելու համար:

Ի վերջո, օգնելով Քեմալին ջախջախելու ռազմաշտում հայկական փոքրաքանակ զինված ուժերին, խուժելու Արեւելյան Հայաստանի տերիտորիան, սպառնալով ընաջնջել նաեւ Արեւելյան Հայաստանի հայությանը, հասցնել գործն այնտեղ, որ Հայաստանի ազգայնական ղեկավար կուսակցությունները ժողովուրդը թուրքական յաթաղանից ազատելու համար ստիպված լինեն իշխանությունը հանձնելու թուրքերի բարեկամ բոլշեւիկներին եւ հեռանալ քաղաքական ասպարեզից:

Այս պլանով էլ զարգանում են իրադարձությունները 1920 թվականի մայիսից նոյեմբեր ամիսներին:

Այդ պլանը մշակվում է Մոսկվայում, Անկարայում, Թիֆլիսում եւ Բաքվում Սովետական Ռուսաստանի եւ Քեմալ փաշայի կառավարությունների միջեւ տարվող բանակցությունների ժամանակ (1920թ. ապրիլ-օգոստոս ամիսների ընթացքում):

1920թ. օգոստոսի 24-ին Սովետական Ռուսաստանի եւ Քեմալի միջեւ կնքվում է նախնական համաձայնագիր, որը փաստորեն 1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի չստորագրված, ավելի շուտ՝ չվավերացված եւ չհրապարակված տեքստն է կազմում:

Նշանակում է քեմալական բանակի կողմից Հայաստանի դեմ սկսած ռազմական գործո-

ղութիւններից մեկ ամիս առաջ արդեն վերջնական համաձայնութիւն էր կայացվել Սովետական Ռուսաստանի եւ Քեմալական Թուրքիայի միջեւ՝ Հայաստանի եւ Անդրկովկասի մյուս հանրապետութիւնների անկախութիւնը ոչնչացնելու եւ Անդրկովկասը բաժանելու հարցի վերաբերյալ:

1920 թ. ամռանը Քեմալ փաշայի եւ Հայաստանի վրա հարձակվելու պատրաստ թուրքական բանակի հրամանատար (թուրքական արեւելյան ռազմաճակատի հրամանատար) Քյազիմ Կարաբեքիր փաշայի միջեւ սուր տարաձայնութիւն է ծագում ռազմական գործողութիւններն սկսելու ժամկետի վերաբերյալ:

Կարաբեքիր փաշան պահանջում էր Հայաստանի վրա հարձակվել տակավին 1920 թ. հուլիսի սկզբներին, իսկ Քեմալ փաշան առաջարկում էր հապաղել, մինչեւ որ Ռուսաստանի կառավարության հետ լիակատար համաձայնութիւն ձեռք բերվի փոխադարձ օգնության եւ տերիտորիալ պահանջների վերաբերյալ:

Կարաբեքիր փաշան շտապում էր, որովհետեւ երկյուղ էր կրում, թե մայիսին Մոսկվա մեկնած հայկական պատվիրակությունը՝ Շանթի[73] գլխավորությամբ, կարող է հաջողացնել համաձայնագրի ստորագրումը Սովետական Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ, ուստի, ռազմական գործողութիւններ սկսելով Հայաստանի դեմ, կարելի է կանխել հնարավոր համաձայնությունը:

Քեմալ փաշան չէր շտապում, որովհետեւ տեղյակ էր սովետա-թուրքական բանակցութիւնների հաջող ընթացքին, միաժամանակ գիտեր, որ Շանթի միսիան ձախողելու համար եռանդուն գործունեություն են ծավալել հայ, վրացի եւ ադրբեջանցի բոլշեւիկները:

Նրան հայտնի էր, որ Ադրբեջանից կառավարական հատուկ պատվիրակություն է մեկնել Մոսկվա, որի կազմում են նաեւ Անաստաս Միկոյանը[74] եւ Ս. Տեր-Գաբրիելյանը[75], որոնք ամեն ինչ անում են, որպեսզի Լենինը ու Ստալինը չճանաչեն Հայաստանի կառավարությունը, համաձայնության չգան Շանթի հետ: Քեմալ փաշան հավատացած էր, որ Շանթը Մոսկվայից վերադառնալու է ձեռնունայն, որ Սովետական կառավարությունը ի վերջո դերադասելու է Թուրքիայի հետ համաձայնագիր ստորագրել:

Եւ ահա, երբ Շանթին Մոսկվայից ձեռնունայն ետ են ուղարկում Երեւան, երբ օգոստոսի 24-ին ստորագրվում է վերջնական համաձայնագիր Թուրքիայի եւ Սովետական Ռուսաստանի միջեւ, Քեմալը հրահանգ է տալիս Կարաբեքիր փաշային՝ նախապատրաստվելու հարձակման:

Պատրվակ բռնելով հայկական զորքերի կողմից Օլթիի[76] ածխահանքերը գրավելը (Հայաստանը վառելիք չուներ եւ ուզում էր օգտագործել Օլթիի քարածուխը), թուրքական զորձակալների կողմից Արեւմտյան Հայաստանի մերձսահմանային շրջաններում եւ Հայաստանի տերիտորիայի վրա կազմակերպած քրդական եւ թուրքական խռովությունները եւ դավաղրությունները ճնշելու փաստերը՝ թուրքական 35 հազարանոց բանակն սկսում է ամբողջ ճակատով հարձակվել Հայաստանի վրա: Դա 1920 թ. սեպտեմբերի 23-ին էր: 1920 թվականի սեպտեմբերի 29-ին ռուսական բոլշեւիկյան կառավարությունը հատուկ որոշում է ընդունում ֆինանսական, ռազմական եւ ամեն տեսակի օգնություն ցույց տալ Քեմալական Թուրքիային Հայաստանի դեմ մղվող պատերազմում եւ պաշտպանել Թուրքիայի տերիտորիալ պահանջները Հայաստանից մինչեւ 1914 թվականի սահմանները: Այս որոշումը տակավին

չի հրապարակված, բայց վերջերս Մոսկվայում՝ ՍՄԿԿ կենտկոմում, մի խորհրդակցության ժամանակ, որտեղ քննվելիս է եղել պրոֆ. Միլլերի[77] դեմ ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի եւ արեւելագիտության սեկտորի գիտական խորհուրդների միացյալ նիստում հաստատված քննադատական հոդվածը, Միլլերը՝ ի պաշտպանություն թուրքոֆիլ եւ հակահայկական ելույթների, հարկ է համարել ընթերցել արխիվներից հանված այդ վավերագիրը:

Խորհրդակցությանը Հայաստանից մասնակցած ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանն է կարդացել այդ որոշումը:

Այդ որոշման համաձայն՝ սովետական կառավարությունը դաշնակից Թուրքիային է տրամադրում 10 միլիոն ռուբլի՝ ոսկով, եւ անհրաժեշտ քանակությամբ զենք ու ռազմամթերք:

Մինչեւ Հայաստանի վրա թուրքական զինված հարձակումը, տակավին 1920 թ. ապրիլի 28-ին Քեմալ փաշայի հրահանգով եւ խորհրդով Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը առանց մի կրակոցի իշխանությունը հանձնում է բոլշեւիկներին եւ Ադրբեջանը հայտարարում սովետական: Անդրկովկաս արշավող 11-րդ Կարմիր բանակը մայիսի 1-ին մտնում է Բաքու եւ անմիջապես վերջնագիր հղում Հայաստանի դաշնակցական կառավարությանը՝ պահանջելով անհապաղ զինված ուժերը դուրս բերել Ղարաբաղից, Զանգեզուրից եւ Նախիջեւանից՝ այդ մարզերը Ադրբեջանին հանձնելով:

Հասկանալի է, որ Քեմալ փաշայի ջանքերով «խաղաղ» լուծվում էին հայ-ադրբեջանական տերիտորիալ վեճերը՝ հօգուտ Ադրբեջանի: Այս պայմանով էլ Ադրբեջանը պատրաստակամությամբ ընդունում է սովետական իշխանություն, դառնում է Սովետական: Մնում էին Հայաստանն ու Վրաստանը:

1920թ. սեպտեմբերին Բաքվում գումարվում է այսպես կոչված Արեւելքի ժողովուրդների համագումարը, որի թուրքական պատվիրակների կազմում էին Էնվեր, Ջեմալ, Խալիլ փաշաները: Համագումարը ղեկավարում էին Զինովեւը, Ռադեկը, Պավլովիչը[78], Ստալինը, Ձիչերինը, Օրջոնիկիձեն[79], Կիրովը[80], Միկոյանը եւ այլն:

Հայկական պատվիրակությունը գլխավորում էր Արտ. Կարինյանը[81], որը եղբայրական սիրով սեղմում էր հայ ժողովրդի դահիճներ Էնվեր, Խալիլ, Ջեմալ փաշաների ձեռքը եւ նույնիսկ համբուրվում նրանց հետ:

Այդ համագումարում էր, որ Ստալինը Քեմալական Թուրքիային հռչակեց «ռեւոլյուցիայի դրոշակակիր Արեւելքում», այդտեղ էր, որ Պավլովիչը Հայաստանը որակեց որպես «Անտանտայի կապովի շուն», որը պետք է ոչնչացվի Թուրքիայի «հեղափոխական» դրոշի տակ համախմբված Արեւելքի ճնշված ժողովուրդների միացյալ հարվածների տակ եւ այլն:

Այսպիսով Սովետական Ռուսաստանը կատարում էր այն, ինչ որ ծրագրել էր Անգլիան. վերականգնել թուրքական բանակը եւ Անատոլիայում ստեղծել ուժեղ Թուրքիա՝ որպես ապագա պլացդարմ Սովետական Ռուսաստանի դեմ:

Ռուսաստանի քաղաքական առաջնորդները թերեւս հասկանում էին այս դառը ճշմարտությունը, բայց եւ այնպես սիրահոժար իրագործում էին Թուրքիան վերականգնելու անգլիական (կամ Անտանտայի) պլանը, որովհետեւ դրա մեջ տեսնում էին երկու գործնական նպատակ. 1) Սովետական իշխանություն էր հաստատվում Անդրկովկասում թուրքական յա-

թաղանի միջոցով, 2) ենթադրվում էր, որ հնարավոր կլինի Հայաստանի վրայով Կարմիր բանակը մտցնել Թուրքիա, որի հետեւանքով Թուրքիայում էլ կհաստատվեն սովետական կարգեր, եւ այդպիսով Թուրքիայի վրայով ռուսական հեղափոխության հրդեհը կմոտեցվի Եւրոպային, եւ թերեւս այդ հրդեհը համակի ողջ Եւրոպան, հասցնի միջազգային իմպերիալիզմի կործանմանը եւ համաշխարհային պրոլետարական ռեւոլյուցիայի հաղթանակին: Թերեւս Կարմիր բանակի առկայությամբ Թուրք գյուղացին ու բանվորը եւս համակվեն բոլշեւիզմի գաղափարներով եւ, միանալով Կարմիր բանակին, խորտակեն Թուրքիայում ֆեոդալական եւ բուրժուական կարգերը եւ կանխեն, թույլ չտան, որ Թուրքիան դառնա նոր պլացդարմ Ռուսաստանի դեմ պայքարելու համար:

Ավելի ճիշտ այս հավանականության ստրատեգիան հորինվել էր ամբոխին մոլորեցնելու, զուտ պրոպագանդիստական նպատակով՝ կարինյանների նման տխմարներին համաշխարհային հեղափոխության ցնորամտություններով կերակրելու համար, քանի որ դժվար թե Քեմալը թույլ տար, որ Կարմիր բանակը ոտք դնի Անատոլիա, իսկ մյուս կողմից Ա. Սկաչկոն[82] ասում է, որ դա կդիտվեր իբրեւ ցարիզմի նվաճողական քաղաքականության շարունակում հեղափոխության անվան տակ:

Այս մասին են վկայում սովետա-քեմալական բարեկամության եւ փոխադարձ օգնության ակտերը եւ Թուրքիան «Արեւելքում հեղափոխության դրոշակակիր» հռչակելու զառանցական աղմկարարությունը, որի մեջ խեղդամահ եղավ մարքսյան դասակարգային պայքարի տեսությունը՝ «Արեւելքում հեղափոխական գործունեության եւ պրոպագանդայի հանձնաժողովի» ջանքերով, որի մեջ մտնում էին Ստալինը, Պավլովիչը (որպես այդ զառանցանքի ստրատեգներ եւ տեսաբաններ), Օրջոնիկիձեն, Միկոյանը, Զինովեւը, Ռադեկը, Ջերժինսկին եւ այլն:

Իսկ Կարսը վերցնելուց հետո Կարաբեքիր փաշան ոչ միայն ծովում խեղդեց թուրք առաջին կոմունիստներին, այլ հասկացնել տվեց, որ «ռեւոլյուցիայի» ներկայացումը Թուրքիայի համար վերջացած է այլեւս, որ ինքը պատրաստ է նույնիսկ զենքով դիմավորել բոլշեւիկներին... Զիչերինն էլ սրան արդեն խուլիգան է անվանում... (Տե՛ս հեռագիրը Օրջոնիկիձեին):

Քեմալական զինված հարձակումը Անտանտայի կողմից լքված փոքրիկ Հայաստանի վրա եւ Կարսի, Արդահանի, Սարիղամիշի, Ալեքսանդրապոլի, Բաթումի գրավումը սպառնալիքի տակ դրին նաեւ Երեւանը: Զգիմանալով թուրքական հորդաների գրոհներին եւ XI Կարմիր բանակի վերջնագրերի ճնշմանը՝ Հայաստանի մնացած մասը կոտորածից փրկելու համար Հայաստանի կառավարությունը 1920 թ. դեկտ[եմբերի] 2-ի առավոտյան ժ. 12-ին հատուկ համաձայնագրով իշխանությունը հանձնում է Սովետական Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեգրանին[83] եւ հեռանում ասպարեզից:

Նոյեմբերի 29-ին արդեն բոլշեւիկյան հեղկոմը, որը կազմվել էր Ադրբեջանում, մտնելով Իջեւան, հրապարակում է դեկլարացիա՝ Հայաստանում սովետական իշխանություն հռչակելու մասին: Այսպիսով Հայաստանում էլ Սովետական Ռուսաստանը հասավ իր նպատակին: Մնում էր Վրաստանը: Դրա համար էլ հարմար առիթը կար: Վրացական կառավարությունն անզգուշություն ունեցավ օգտվել Հայաստանի ողբերգական վիճակից. զորք մտցրեց Լոռվա չեզոք գոտի եւ այն միացրեց Վրաստանին:

Սակայն բոլշեւիկները ապստամբեցրին հայ ազգաբնակչությանը Վրաստանի կառավա-

ությանայդ զավթողական ոտնձգության դեմ: Այդ ապստամբությունը պատրվակ բռնելով՝ XI Կարմիր բանակի զորամասերը ռազմական գործողություններ սկսեցին Վրաստանի դեմ եւ զենքի ուժով տապալեցին վրաց մենշեւիկյան կառավարությունը:

1921թ. փետրվարին Վրաստանն էլ արդեն սովետական կարգեր ընդունեց:

Հարկավոր էր օրինականացնել միացյալ ջանքերով Անդրկովկասում ձեռք բերած հաղթանակը: Եւ 1921 թվականի մարտի 16-ին Մոսկվայում խաղաղության կոնֆերանսի են հավաքվում Քեմալական Թուրքիայի, Սովետական Ռուսաստանի ու Հայաստանի բոլշեւիկ պատվիրակները: Փաստորեն քննվում է միայն Հայաստանի ճակատագրի հարցը, քանի որ այլ հարց չկար:

Համաշխարհային հեղափոխության մոլոխը[84] զոհ է պահանջում,- ասում են Սովետական Ռուսաստանի քաղաքագետները:

Այդ մոլոխը դաշնակից Թուրքիան է: Նա Ռուսաստանից եւ Ադրբեջանից պահաջ չունի: Նա սիրում է խմել հայի արյունը եւ կլանել Հայաստանի մարմինը: Ղեկավարվելով Լենինի դրույթներով՝ Հայաստանը պետք է պատրաստակամությամբ իր ազգային շահերը (տերիտորիաները եւ ժողովրդի որոշ զանգվածները) զոհաբերի «Համաշխարհային հեղափոխության շահերին», այսինքն՝ կեր դառնա թուրքական մոլոխին, բավարարի նրա պահանջները:

Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի հայ ժողովուրդը հրաժարվի ոչ միայն Վանից, Բիթլիսից, Էրզրումից, այլեւ Թուրքիային զոհաբերի Կարսը, Արդահանը, Սարիղամիշը. չէ՞ որ դրա դիմաց մեր բարեկամ Թուրքիան համաձայնվում է Բաթումից դուրս բերել իր զորքերը եւ այն վերադարձնել Սովետական եղբայրական Վրաստանին:

Բացի դրանից, Ղարաբաղի մարզը եւ Նախիջեւանի ավտոնոմ[85] Հանրապետությունն էլ Հայաստանը պիտի զիջի եղբայրական Սովետական Ադրբեջանին:

Ու ձեւակերպվում է 1921թ. Մոսկվայի պայմանագիրը, որն օրինականացնում է սովետա-թուրքական սահմանը, որի համաձայն ոչնչանում են Անդրկովկասի ժողովուրդների անկախ հանրապետությունները՝ վերածվելով փաստորեն ռուսական մարզերի, որոնցից միայն [Արեւելյան] Հայաստանն է կորցնում իր տերիտորիայի կեսը, ինչպես եւ ամբողջ Արեւմտյան Հայաստանը:

Ասում են, որ որոշ հայ բոլշեւիկներ նույնիսկ առաջարկել են Ստալինին, որը 1920 թ. նոյեմբերի 4-ին Բաքվում ղեկավարում էր բոլշեւիկների կովկասյան բյուրոյի եւ Բաքվի կոմիտեի միացյալ նիստը, որտեղ քննվում էր Հայաստանի ճակատագրի հարցը թուրքական դաշնակիցների ներխուժման կապակցությամբ, թե «Հանուն համաշխարհային հեղափոխության հաղթանակի շահերի՝ իրենք պատրաստ են զոհաբերելու ամբողջ Հայաստանը եւ հայ ժողովուրդը» (Ամասիկ Հարությունյան, Ավիս[86] եւ այլն): Ինչ-որ տեղ գրվել է այս հայ բոլշեւիկների «հեղափոխական սխրագործության» մասին: Ուրեմն դա պատմական իրողություն է:

Բայց եւ եղել են այլ կերպ դատողներ էլ: Օրինակ՝ Կարախանը մի զեկուցագիր է ներկայացրել Լենինին (1919 թե 1920 թվականին), որտեղ տվյալներով հիմնավորել է, թե տվյալ պահին միանգամայն ռեալ եւ հնարավոր բան է նույնիսկ մեծ անկախ Հայաստանի ստեղծումն ու ճանաչումը, քանի որ Թուրքիան այնպիսի վիճակում է, որ այդ ծրագրի իրագործմանը ոչնչով չի կարող խանգարել: Լենինն այդ զեկուցագիրն ուղարկում է Ստալինին

եզրակացության համար: Եւ Ստալինը մակագրում է զեկուցագրի վրա. «Ելնելով համաշխարհային հեղափոխության շահերից՝ ոչ մի դեպքում նպատակահարմար չէ անկախ Հայաստանի ստեղծումը»: Եւ դրանով էլ թաղվում է Կարախանի առաջարկությունը:

Ծատուր Աղայանն իր «Հոկտեմբերյան հեղափոխությունը եւ Հայաստանի(1912-1982) ազատագրումը» ռուսերեն աշխատության մեջ, որը լույս է տեսել վերջերս, բերել է Ստալինի 2 հեռագրերը՝ մեկը հասցեագրված Լենինին, որի մեջ ասված է, որ «Ոչ մի դեպքում չի կարելի ճանաչել Հայաստանի անկախությունը, քանի որ Հայաստանը սեպի նման խրված է Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ եւ խանգարում է մահմեդական ցեղերի համախմբմանը Թուրքիայի շուրջը եւ այդպիսով դժվարացնում է հեղափոխության գործը Արեւելքում: Երկրորդ՝ ամենայն հավանականությամբ Անտանտան կօգտագործի անկախ Հայաստանի տերիտորիան՝ որպես պլացդարմ Սովետական Ռուսաստանի դեմ նոր հարձակման համար», իսկ մյուսը՝ Օրջոնիկիձեի անունով, որի մեջ ասվում է, որ «Կարաբեքիր փաշային պետք է հասկացնել, որ բոլշեւիկյան Ռուսաստանի կառավարությունը պահանջում է ձեռք քաշել Ալեքսանդրապոլը գրավելու մտադրությունից: Ինչ վերաբերում է Կարսին եւ Արդահանին, ապա հարկ չկա դաշնակցական Հայաստանի համար գժտվել դաշնակից Թուրքիայի հետ»:

Սովետական կառավարության քաղաքականության մեջ Ստալինը վճռական դեր էր խաղում այդ օրերին. Լենինն ամբողջապես նրան էր վստահել Արեւելքի ժողովուրդներին վերաբերող հարցերի լուծումը: Եւ նա լուծում էր վրացական ասպեկտով[87]՝ Ռուսական սովետական կայսրության «շահերը» նկատի առնելով: Ի հաշիվ Հայաստանի՝ կարգավորվում էր Վրաստանի ու Ադրբեջանի գործերը՝ ապահովելով Անդրկովկասի սովետականացումը Թուրքական զենքի ուժով:

Ռուսների մեջ չգտնվեց մեկը, որը նկատեր, որ անկախ Հայաստանն ավելի դժվար եւ գրեթե երբեք չէր կարող դառնալ պլացդարմ Ռուսաստանի դեմ, որովհետեւ երբեք հայերը թշնամի չեն եղել Ռուսաստանին, մինչդեռ ուժեղ Թուրքիան եւ Ադրբեջանը, նույնիսկ Վրաստանը շատ հեշտությամբ ի վերջո դառնալու են իսկական պլացդարմ Ռուսաստանի դեմ՝ նոր ագրեսիա կազմակերպելու դեպքում: Սա ապագային էր վերաբերում, այդ պատճառով էլ ռուսները չտեսնելու տվին այդ պոտենցիալ[88] վտանգը, որ ստեղծում էր Ստալինը Ռուսաստանի հարավում:

Մյուս կողմից Ստալինը ելնում էր այն իրողությունից, որ անկախ մեծ Հայաստանի ստեղծումը անխուսափելիորեն հանգեցնելու է այն բանին, որ Մերձավոր Արեւելքում ու Անդրկովկասում առաջատար դերը պատկանելու է Հայաստանին. նա կդառնա գերիշխող Վրաստանի նկատմամբ: Հարկավոր էր այն օրին հասցնել Հայաստանը, որ միշտ ապահովված լինի Վրաստանի առաջատար դերը երկրամասում, իսկ եթե հնարավոր է, նույնիսկ Հայաստանը ենթարկել Վրաստանին՝ իբրեւ ավտոնոմ հանրապետություն:

Այս ենթադրության ճշտությունը հաստատվում է այն քաղաքականությամբ, որ վարում էին Ստալինը եւ Բերիան[89] Հայաստանի նկատմանբ արդեն անհատի պաշտամունքի տիրապետության տարիներին, երբ Գեւորգ VI Կաթողիկոսի հետ ունեցած զրույցի ժամանակ Ստալինն առաջարկում է արտասահմանից եկող հայերին տեղավորել Ալթայան[90] երկրամասում եւ այնտեղ «ստեղծել փոքրիկ Հայաստան», ինչպես եւ Բերիայի առաջադրանքը Հայաստանի ներքին գործերի մինիստրությանը՝ 280.000 հայեր ձերբակալել եւ աքսորել կամ ոչնչաց-

նել, որպեսզի առաջիկայում հիմք ունենա սահմանադրության մեջ փոփոխություն մտցնելու առաջարկությամբ հանդես գալու եւ Հայաստանը ավտոնոմ հանրապետություն դարձնելու ու Վրաստանի կազմի մեջ մտցնելու համար:

Ռուս բոլշեւիկներն այս բոլորի վրա ուշադրություն չեն դարձնում՝ հավատացած լինելով, որ ի վերջո բոլորն էլ կազմում են ռուսական կայսրության մարզեր. ինչ նշանակություն ունի թե Հայաստանն ինքնուրույն հանրապետություն է թե ավտոնոմ՝ Վրաստանի կազմում:

Եւ այսպես, Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Ռուսական կայսրության մեջ մտնող ժողովուրդների քաղաքական ղեկավարները, բացի Հայերից, համաշխարհային հեղափոխության մասին բարձրացրած հարայ-հրոցի, ինտերնացիոնալիզմի, բարեկամության եւ սոցիալիզմի եղբայրական ընտանիքի մասին բարբաջելով, այդ դեմագոգիայի քողի տակ աշխատել են կարգավորել իրենց տերիտորիալ եւ ազգային գործերը:

Դրա համար էլ բզկտված եւ ընչազուրկ, իրավազուրկ եւ փաստորեն անղեկ մնաց միայն Հայաստանը, հայ ժողովուրդը, որովհետեւ հայ բոլշեւիկ լիդերների[91] համար գոյություն չի ունեցել ո՞չ Հայկական հարց, ո՞չ Հայաստան եւ ոչ էլ հայ ժողովրդի ազգային շահ: Նրանք եղել ու մնում են որպես իրենց մեծ եւ փոքր եղբայրների մանկլավիկները[92] եւ իրենց անձնական բարեկեցության մասին միայն մտածող ողորմելի ծառաներ, սողուններ: Նրանք լավ սերտել են ազգասպանության դասը, որ հրահանգվել է նրանց ի վերուստ. «Զհանդուրժե՛լ, անողոք ջախջախե՛լ նացիոնալիզմի ամեն մի արտահայտություն»:

Իսկ հայրենասիրական եւ ազգապահպանման ամեն մի խոսք հայ բոլշեւիկ ղեկավարների ականջին հնչում եւ նրանց դատարկ գանգերի մեջ, ուր միայն հեղափոխական ֆրազի[93] միջանցիկ քամիներն են փոթորկում, արձագանքում է որպես «նացիոնալիզմ»: Ահա թե ինչու, 40 տարի շարունակ տնօրինելով հայ ժողովրդի ճակատագիրը, Հայաստանի բոլշեւիկ ղեկավարները ստրկական հավատարմությամբ կատարել են իրենց ստոր դերը՝ ֆիզիկապես ոչնչացրել են առողջ բանականության տեր հայ մարդկանց, անողոք դատաստան տեսել ազգապահպանման ու ազգաշինության նպատակին ուղղված ամեն մի հայրենասիրական միտք եւ ստեղծագործություն, ամեն մի առողջ ձայն Հայաստանի հողերի միավորման մասին, ինչպես այս օրերին եռանդագին նախապատրաստվում են դատաստան տեսնելու գրականագետ Հրանտ Թամրազյանի հետ[94]՝ «Խմբապետ Շավարշը[95] եւ նրա էպոխան»[96] տեսական-քննադատական հոդվածի համար, որը զետեղված է հենց նոր լույս տեսած, բայց կալանքի տակ առնված «Գրական ուղղություններ» գրքույկում, եւ որտեղ երիտասարդ գրականագետը փորձ է արել վերագնահատելու հայ ազգային- ազատագրական շարժման պատմության մեջ հայ քաղաքական կուսակցությունների դերը՝ դրականապես գնահատելով հայ կամավորական շարժումը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, եւ այդ հիման վրա Զարենցի պոեմում խմբապետ Շավարշի կերպարը դիտում որպես դրական կերպար:

Այստեղ «նացիոնալիզմ»-ի ռեցիդիվ[97] են տեսնում Հայաստանի պետական եւ քաղաքական ղեկավարները. հայ ժողովրդին բնաջնջող եւ Հայաստանի Հանրապետության դեմ զինված դավադրությունները կազմակերպող թուրքերի («եղբայր թուրքերի») դեմ հոխորտացող եւ կռվող խմբապետ Շավարշին գրականագետը արդարացնում է[98]: Ուրեմն նա նացիոնալիստ է, պետք է պատժվի: Եւ կպատժեն՝ հանուն իրենց պաշտոնների պահպանման շահերի, հանուն ռուսական կայսրության եւ ուժեղ Թուրքիայի շահերի:

Այս օրերին դատաստան է նախապատրաստվում նաեւ այն հայերի նկատմամբ, ովքեր ՍՍՌՄ նոր սահմանադրության նախագիծը մշակող հանձնաժողովին են ուղարկել նամակներ, առաջարկություններ՝ Ղարաբաղը եւ Նախիջեւանը Հայաստանին միացնելու պահանջով: Սա էլ դիտվում է իբրեւ նացիոնալիզմ, որովհետեւ շոշափվում է «եղբայրական» Թուրքիայի եւ Ադրբեջանի շահերը...

Առանձնապես վրդովված են հին բոլշեւիկ-մարքսիստներ Արտաշես Կարինյանը, Աշոտ Հովհաննիսյանը[99] եւ սրանց աշակերտները: Զէ՞ որ այդ բոլորը հակառակ է նրանց կոնցեպցիաներին Հայաստանի եւ հայ ժողովրդի ճակատագրի մասին, Ռեմալական Թուրքիայի եւ Սովետական Ռուսաստանի մասին: Թամրազյանը փորձ է արել արդարացնել թուրքական բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը եւ նրա ղեկավարներին, մինչդեռ Աշոտ Հովհաննիսյանը 50 տարի շարունակ դատապարտել է հայ ազգային-ազատագրական շարժումը Թուրքիայի տիրապետության դեմ, դիտել է եւ գնահատել այդ շարժումը որպես «ավանտյուրա», «նացիոնալիզմ», որ միակ ճշմարիտ ուղին հայերի համար այն էր, որ համակերպվեին թուրքական բռնակալական կարգերին եւ ձուլվեին թուրքերի հետ, ընդունեին մահմեդականություն եւ վերջ տային Արեւմտյան Հայաստանը Թուրքիայից անջատելու «նացիոնալիստական-իմպերիալիստական» ոտնձգություններին:

Իսկ Արտաշես Կարինյանը կատաղած է նրա համար, որ տակավին գտնվում են հայեր, որոնք մտածում են Հայաստանի եւ հայ ժողովրդի ազգային միավորման մասին, պահանջում են Ղարաբաղը, Նախիջեւանը միացնել Հայաստանին: Սա ոտնձգություն է «եղբայրական» Թուրքիայի եւ Ադրբեջանի «կենսական շահերի դեմ», “Чистейший армянский воинствующий национализм империалистического толка”[100] : Մինչդեռ ինքը, ելնելով մարքս-լենինյան «ինտերնացիոնալիզմի» դիրքերից, տակավին 1924 թվականին գրել է, որ «թույլ չպետք է տալ հայերի հավաքմանը Հայաստանում, քանի որ այդ առաջ է բերում հայ պետականության գաղափար... որից մենք վաղո՛ւց ի վեր հրաժարվել ենք: Իսկ Հայաստանում կուտակված 300.000 արեւմտահայ գաղթականներին պետք է ցրել Ռուսաստան...»:

Ավելին: 1927 թվականին «Նորք»-ում գրել է. «Մենք գերադասում ենք, որ Հայաստանը պատկանի Թուրքիային, քան թե գտնվի հայ ազգայնականների իշխանության տակ», որովհետեւ, ինչպես գրել է 1929 թվականին, «Հայկական նացիոնալիզմը... վերաճել է հայկական ֆաշիզմի, որի ակունքները պետք է որոնել հայագիտության, հայ պատմագրության եւ գրականության մեջ...»: Իսկ Գեւորգ Աբովի[101] եւ ուրիշ «ինտերնացիոնալիստների» (Միլլեր, Պավլովիչ եւ այլն) հետ միաձայն այն տեսակետին է, որ Վանը, Մուշը, Բիթլիսը, Էրզրումը, Ալաշկերտը, Կարսը, Արդահանը, Սարիղամիշը «իսկական թուրքական» հողեր են, մինչդեռ հայ դաշնակցական նացիոնալիստները «իմպերիալիստական ոտնձգություններ էին կատարում Թուրքիայի ամբողջականության դեմ՝ ցանկանալով զավթել այդ հողերը եւ ստեղծել անկախ Հայաստան»: Ինչ վերաբերում է Ղարաբաղին, ապա Արտաշես Կարինյանի կարծիքով, որը նա արտահայտել է Աշոտ Հովհաննիսյանի մոտ վերջին օրերիս, “Чисто финансовый вопрос. Ибо Карабах сидит на дотации. Азербайджан-то может давать дотацию, а разве Армения может выделить дотацию для содержания Карабаха...”[102]: Ահա թե ինչու Ղարաբաղի, Նախիջեւանի, Ախալքալաքի, Գանձակի հայկական շրջանները Հայաստանի հետ միավորելու մասին մտածողները «մոլեռանդ նացիոնալիստներ են», ուստի եւ

հանուն «լենինյան ինտերնացիոնալիզմի եւ ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելու շահերի» պետք է անողոքաբար ջախջախել այդ տրամադրությունների հեղինակներին, որոնք ոտնձգություն են թույլ տալիս «եղբայրական» Թուրքիայի, Ադրբեջանի եւ Վրաստանի շահերի դեմ: Ջախջախել են 40 տարի շարունակ եւ էլի կջախջախեն, քանի որ այս ազգադավների ձեռքում է իշխանությունը, նրանց թիկունքում է Սովետական Ռուսաստանը:

Ահա թե ինչ տվեց հայ ժողովրդին «ազատարար» հոկտեմբերը:

Արեւելյան կամպանիան[103] (Հայաստանի դեմ ուղղված պատերազմը) Քեմալը վերջացրեց հաղթականորեն, որի արդյունքներն ամրապնդվեցին 1921 թվականի Մոսկվայի «եղբայրության ու բարեկամության սովետա-թուրքական պայմանագրով»: Միացյալ ջանքերով ջախջախվեց եւ բաժան-բաժան արվեց որը ու արնավառ Հայաստանը: Քեմալն իր ամբողջ զինված ուժերը կենտրոնացրեց արեւմտյան ռազմաճակատում՝ հույների դեմ: Անտանտայի, այսինքն՝ միջազգային իսկական իմպերիալիզմի թողտվությամբ եւ քաջալերանքով, Սովետական Ռուսաստանի հզոր օգնությամբ Քեմալի բանակները ջախջախեցին նաեւ հունական զորքերին, ետ գրավեցին Իզմիրը եւ ամբողջ Արեւմտյան Անատոլիան: Արդեն իրականացված էր (1922 թվականին) անգլիական ստրատեգիան: Ստեղծվեց «նոր», բավականաչափ ուժեղ Թուրքիան՝ որպես ապագա պլացդարմ Ռուսաստանի դեմ: Ինչպես արդեն ասվեց վերեւում, Լենինը, իհարկե, հասկանում էր այդ, բայց եւ այնպես ամեն ինչով օգնում էր այդ պոտենցիալ հակասովետական պլացդարմի ստեղծմանը՝ Անդրկովկասը Ռուսաստանի կազմում պահելու եւ Թուրքիայի վրայով հեղափոխության հրդեհը Եւրոպա փոխադրելու ավելի քիչ հավանականության ստրատեգիական նպատակներով: Անդրկովկասի նկատմամբ հույսերն արդարացան, իսկ համաշխարհային հեղափոխության եւ անգլիական իմպերիալիզմի կործանման հույսերն ի դերեւ ելան:

Լլոյդ Ջորջը[104] եւ Ջերչիլն[105] ավելի լավ էին ճանաչում Քեմալ փաշային, քան Լենինը եւ նրա զինակիցները: Դրա համար էլ Քեմալական շարժման ժամանակ անգլիական իմպերիալիստները, նստած Թուրքիայի մայրաքաղաքում, ոչ մի անհանգստության նշան ցույց չէին տալիս՝ համոզված լինելով, որ Քեմալն ի վերջո հակվելու է իմպերիալիզմի կողմը՝ ընդդեմ Սովետական Ռուսաստանի: Ոչ մի կրակոց տեղի չունեցավ միջազգային իմպերիալիզմի ուժերի եւ Քեմալի զինված ուժերի միջեւ, թեեւ Լենինը եւ Ստալինը, Զինովեւն ու Ռադեկը, Չիչերինն ու Կարախանը, Օրջոնիկիձեն ու Միկոյանը, Պավլովիչն ու Միլլերը, Կարինյանն ու Աբովը, Աշոտ Հովհաննիսյանն ու Մդիվանին[106] եւ ամբողջ թուրք-ադրբեջանական պրոպագանդիստական խորը[107]՝ Էնվեր-Ջեմալ-Խալիլ փաշաներից մինչեւ կոմունիստ Մուստաֆա Սուբխին ու Կազանի թաթարները, հարան-տարան էին բարձրացրել եւ, կաշվից դուրս գալով, ճգնում էին իրենց ժողովուրդների ու աշխարհի աչքերին թող փչել, հավատացնել, թե «Թուրքիան ռեւոլյուցիայի դրոշակակիրն է Արեւելքում», թե Քեմալը կռվում է միջազգային իմպերիալիզմի դեմ, մասնավորապես կռվում է անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի դեմ՝ հանուն համաշխարհային հեղափոխության հաղթանակի: Իրականում այդ «միջազգային իմպերիալիզմը», որի դեմ կռվում էր Քեմալական Թուրքիան՝ Սովետական Ռուսաստանի օգնությամբ, բազմաչարչար եւ անպաշտպան, քաղցած ու հայրենիքից տեղահանված հայ գյուղացիներն էին, հայ բանվորները, իսկ միջազգային կապիտալի ամրոցները հայ գյուղացիների խրճիթներն էին, որ հրդեհում ու ավերում էին Քեմալի «քաջ» բանակները:

Այդ՝ արեւելյան ճակատում: Իսկ արեւմտյան ճակատում դարձյալ դարերով թուրքական բռնակալության տիրապետության տակ ճնշված ու հարստահարված հույն գյուղացիներն էին, արհեստավորներն ու բանվորները:

Իսկական իմպերիալիստների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի զինված ուժերի հետ Քեմալի զորքերը ոչ մի տեղ ընդհարում չունեցան եւ չէին էլ կարող ունենալ, հակառակ դեպքում սովետական օգնությունն էլ չէր փրկի Թուրքիային Սեւրի դամոկլյան[108] սրի սպառնալիքից:

Քեմալական «նոր» Թուրքիան հակասովետական բռունցքի վերածելու անգլիական ստրատեգիական պլանի մասին վերոհիշյալ տեսության ճշտությունը լիովին հաստատվում է արդեն Լոզանի[109] բանակցությունների ընթացքով: Շատ չծավալվելու համար բավարարվենք միայն շարժման հենց սկզբից Քեմալ փաշայի մոտ ուղարկված եւ նրա աջ թեւը հանդիսացող սովետական դիվանագիտական ներկայացուցիչ Ս.Ի.Արալովի վկայությունները հիշելով: Իր “Воспоминания советского дипломата”[110] գրքույկում, որը լույս տեսավ Մոսկվայում 1960 թվականին, Արալովը պատմում է, որ քանի դեռ հույների դեմ հաղթանակը չէր ապահովված, Քեմալ փաշան չէր հեռանում իր կողքից, միշտ սովետական դիվանագետի հետ էր լինում, բանակցում սովետա-թուրքական բարեկամությունն ամրապնդելու, փոխադարձ օգնության եւ միասնական գործողությունների պլան մշակելու մասին:

Իսկ երբ հույներին հաղթեցին, եւ խոսք բացվեց Լոզանի խաղաղության կոնֆերանսի մասին, այդ օրվանից Քեմալն այլեւս չերեւաց սովետական դիվանագիտական ներկայացուցչությունում: Արալովի հետ բանակցությունների գործը հանձնարարեց Մինիստրների սովետի նախագահ անգլոֆիլ եւ կատաղի հակասովետական օպոզիցիայի[111] լիդեր Ռեուֆ[112] բեյին (ծագումով՝ չերկեզ[113]): Արալովը պատմում է, որ Ռեուֆ բեյն ուզում էր անձամբ գլխավորել թուրքական պատվիրակությունը Լոզանի կոնֆերենցիայում[114]: Սակայն Քեմալ փաշան, հաշվի առնելով նրա բացահայտ անգլոֆիլ տրամադրությունները, չուզեց նրան նշանակել պատվիրակության ղեկավար, որպեսզի չխրտնեցնի սովետական կառավարությանը:

Նա ցանկացավ այնպիսի մեկին նշանակել թուրքական պատվիրակության ղեկավար, որը պրոսովետական[115] օրիենտացիա[116] ունենար եւ վստահություն ներշնչեր Չիչերինին՝ ցույց տալով, որ Թուրքիան հավատարիմ է մնում սովետա-թուրքական բարեկամությանը եւ մտադիր է շարունակել համատեղ պայքարը «միջազգային իմպերիալիզմի դեմ արդեն դիվանագիտական սեղանի շուրջը»:

Այդ նկատառումով Քեմալ փաշան ռազմաճակատից ետ է կանչում Իսմեթ[117] փաշային եւ նշանակում Մինիստրների սովետի նախագահի տեղակալ եւ ուղարկում Լոզան՝ որպես թուրքական պատվիրակության ղեկավար: Պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որ Լոզանում բոլոր հարցերում թուրքական եւ սովետական պատվիրակությունները նախօրոք պետք է միմյանց տեղյակ պահեն ու համաձայնեցնեն իրենց դիրքի մասին եւ ելույթները:

Սակայն երբ բանը հասավ կոնֆերանսում քննվող եւ Սովետական Ռուսաստանին հետաքրքրող գլխ[ավոր] միակ հարցին՝ նեղուցների ռեժիմի հարցին, նկատվում է, որ հենց այդ գլխավոր եւ կենսական հարցում Իսմեթ փաշան գաղտնի բանակցությունների մեջ է մտել անգլիացիների հետ՝ առանց այդ մասին կոնսուլտացիայի[118] մեջ մտնելու Թուրքիայի հավատարիմ դաշնակից սովետական դիվանագիտական պատվիրակության հետ:

Չիչերինը դժգոհություն է հայտնում Իսմեթ փաշային այդ վարքագծի համար: Այդ կապակցությամբ Արալովը պահանջում է շուտափույթ հանդիպում Գազի Մուստաֆա Քեմալ փաշայի հետ, բայց նրան պատասխանում են, թե Քեմալը «ռազմաճակատից դեռ չի վերադարձել» (ռազմաճակատ չկար այլեւս. պատերազմը վերջացած էր): Եւ կրկին Արալովն ստիպված է լինում ճաշակել անգլոֆիլ եւ հակասովետական հայացքների տեր վարչապետ Ռեուֆ բեյի տհաճ եւ ոչինչ լավ բան չխոստացող հանդիպումն ու բանակցությունների դառնությունը:

Քեմալ փաշան Անկարա է վերադառնում եւ կրկին հանդիպում Արալովի հետ՝ միայն Լոզանի բանակցությունները եւ նեղուցների ռեժիմի կոնվենցիան[119] ստորագրելուց հետո, երբ ձախողվել էր սովետական պլանը. թույլ չտալ, որպեսզի օտար ռազմանավերը մուտք գործեն Սեւ ծովի ջրերը: Իսմեթ փաշան անգլիացիների (Կերզոնի)[120] հետ համաձայնության էր եկել, որ նեղուցներով պիտի անցնեն Սեւ ծով ոչ միայն առեւտրական նավերը, այլեւ տարբեր տերությունների մինչեւ 10.000 տոննա տարողության ռազմանավերը եւս:

Քեմալն սկսում է մխիթարել սովետական դիվանագետին այն հույսով, թե այդքան փոքր տարողության ռազմանավերի մուտքը Սեւ ծով դժվար թե որեւէ սպառնալիք կամ լուրջ վտանգ ներկայացնի հզոր «բարեկամական» Սովետական Ռուսաստանի համար, չարժե դրա համար անհանգստանալ, քանի որ Սովետական Ռուսաստանի եւ «Նոր Թուրքիայի» միջեւ կնքված է «անխախտելի մշտական եղբայրության ու բարեկամության պայմանագիր», ուստի եւ ոչ մի ուժ չի կարող խախտել այդ բարեկամությունը: Երկու երկրները առհավետ բարեկամներ են եւ միացյալ ջանքերով պիտի շարունակեն պայքարը իմպերիալիզմի դեմ:

Դժվար չէ նկատել, որ Քեմալի խոսքերի մեջ նկատվում է կծու իրոնիայի[121] չեշտ սովետական դիվանագիտության հասցեին, թե՝ «Տեսեք՝ ինչպես կարողացանք կթել Ռուսաստանին եւ վճռական րոպեին ոտնատակ տվինք «բարեկամի» շահերը եւ միացանք մեր իսկական դաշնակիցներին՝ անգլիական, ամերիկյան, ֆրանսիական իմպերիալիստներին, որոնց դեմ իբր թե պայքարի դրոշ էր բարձրացրել Թուրքիան: Մի՞թե չեք հասկանում, որ այդ միայն դիվանագիտական եւ քաղաքական աչքակապություն էր ձեզնից՝ ռուսներից դրամ ստանալու համար, «հեղափոխության» հերթական թատերախաղ...»: Այս է Քեմալ փաշայի իրոնիայի միտքը:

Սովետական դիվանագետները եւ քաղաքական ղեկավարները հասկացան իհարկե, որ Քեմալ փաշան՝ հավատարիմ իր դասակարգային շահերին, աստիճանաբար լքում է սովետական դաշնակցին եւ, դավաճանելով նրա կենսական շահերը նեղուցների հարցում, վերջնականապես անցնում է իմպերիալիզմի գիրկը, որ Թուրքիան դառնում է պլացդարմ Սովետական Ռուսաստանի դեմ իմպերիալիստական նոր արշավանքի համար:

Հենց այդ առաջին դիվանագիտական ակտերից պարզ էր այդ դառն ճշմարտությունը: Բայց ի՞նչ կարող էին անել. այլեւս ուշ էր: Ստիպված էին կուլ տալ Քեմալի մատուցած սովետա-թուրքական «բարեկամության» հիասթափության առաջին պտուղը՝ դերադասելով լռել եւ շարունակել սովետա-թուրքական «բարեկամության» մասին պրոպագանդիստական թմբկահարությունը եւ ստորաքարշությունը, որպեսզի քողարկվի համաշխարհային հեղափոխության «շահերին» Հայաստանը եւ հայ ժողովուրդը զոհաբերելու առասպելի անհեթեթությունը եւ ոճրագործ բնույթը:

Մի պահ եղավ (1945 թ.), որ Ստալինն ուզեց վրեժխնդիր լինել «նոր» Թուրքիայից դավաճանության համար. վերցնել Թուրքիայի ձեռքից նեղուցների բանալիները եւ նույնիսկ կենդանություն տալ Սեւրին:

Բայց դարձյալ չարաչար սխալվեց Թուրքիայի հարցում, ինչպես սխալվել էր 1919-1920 թվականներին:

Ստալինի այդ «սխալն» ուղղելու համար Խրուշչովն ավելի անհեթեթ սխալ քաղաքական դիվանագիտական քայլ կատարեց՝ անամոթաբար հայտարարելով, թե Հայաստանը, Սովետական Միությունն իբր տերիտորիալ ոչ մի պահանջ չունեն Թուրքիայից: Սա մի նոր ոճրագործություն էր Ռուսաստանի քաղաքական ղեկավարների կողմից հայ ժողովրդի ազգային շահերի նկատմամբ:

Ճակատագրական դիվանագիտական տխմարություններով է բնորոշվում Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ: Դրան հակառակ՝ միշտ հաղթական ու հեռատես, նպատակասլաց եւ իմաստուն է եղել Անգլիայի քաղաքականությունը Թուրքիայում եւ Մերձավոր Արեւելքում: Այդ բացատրվում է նրանով, որ Ռուսաստանը ղեկավարել ու ղեկավարում են տակավին ավանտյուրիստները[122] եւ համբակները, իսկ Անգլիան՝ խոհուն, իմաստուն եւ Թուրքիան ճանաչող գլուխները: Իսկ հայ քաղաքական ղեկավարները, փոխանակ սովորելու իմաստուն անգլիացիներից, որդեգրել եւ ֆետիշացրել[123] են ռուսական աշխարհակալական ավանտյուրայի եւ ժողովուրդների ռուսացման տխմար զառանցանքը եւ թուրքական պանթուրանիզմի նողկալի բարբարոսության վարդապետությունը՝ նրանց ենթարկելով սեփական ժողովրդի ճակատագիրը:

Սրա մեջ է հայ ժողովրդի ողբերգության աղբյուրը:

9-10 / IX – 1962 թ

[ստորագրություն]

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Անտանտ - իմպերիալիստական պետությունների դաշինք, որ ձեւավորվեց 1907-ին Անգլիայի, Ֆրանսիայի եւ ցարական Ռուսաստանի միջեւ՝ ընդդեմ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի եւ Իտալիայի:

2 Մուստաֆա Քեմալ (Աթաթյուրք) (1881-1938) - թուրք պետական, քաղաքական եւ ռազմական գործիչ: Թուրքական հանրապետության հիմնադիր եւ առաջին նախագահ (1923): Վերընտրվել է 1927, 1931, 1935-ին: Շարունակել է երիտթուրքերի քաղաքականությունը ազգային հարցում. ոչ թուրք ժողովուրդների ազգաճնշման եւ ոչնչացման քաղաքականություն:

3 Սայքս-Պիկոյի համաձայնագիրը կնքվել է 1916-ի մայիսի 16-ին Անգլիայի եւ Ֆրանսիայի միջեւ՝ Օսմանյան կայսրության ասիական (հատկապես արաբական) տիրույթները բաժանելու վերաբերյալ: Համաձայնագրի նախագիծը պատրաստել էին դիվանագետներ անգլիացի Մարկ Սայքսը եւ ֆրանսիացի Ժորժ Պիկոն (այստեղից էլ Սայքս-Պիկո անվանումը): Ըստ հա-

մաճայնագրի նախագծի՝ արաբական երկրները բաժանվում էին հինգ գոտիների (որոնց մեջ էին մտնում նաեւ Արեւմտյան Հայաստանի մի մասը եւ Քուրդիստանը): Կապույտ գոտին, որ ընդգրկում էր Արեւմտյան Սիրիան, Լիբանանը, Կիլիկիան, Այնթապը, Ուրֆան, Մարդինը, Դիարբեքիրը եւ Հեքիարիի մարզը (Վանա լճից հարավ), անցնելու էր Ֆրանսիայի տիրապետության տակ: Երբ 1916-ի փետրվարին ռուսական բանակը գրավեց Էրզրումը եւ Բիթլիսը, մոտեցավ Իրաքի եւ Սիրիայի մատույցներին, դաշնակիցները շտապեցին իրենց նախագիծը համաձայնեցնել Ռուսաստանի հետ: Ռուսաստանը պահանջեց իրեն հանձնել Թուրքահայաստանը, Հեքիարիի մարզը եւ Սեւ ծովի հարավային ափի մի մասը: Հանգելով փոխզիջումների՝ համաձայնությունը կայացավ:

4 Էնվեր փաշա (1881-1922) - թուրք պետական եւ ռազմական գործիչ: Երիտթուրքական եռապետության ազդեցիկ դեմքերից: Եղել է Թուրքիայի ռազմական նախարար (1913): Արեւմտահայության տեղահանության եւ ջարդերի գլխավոր կազմակերպիչներից էր: 1919-ին հեռակա կերպով դատապարտվել էր մահապատժի՝ իբրեւ պատերազմի հանցագործ եւ հայերի ցեղասպանության կազմակերպիչ: Գլխավորել է բասմաչական շարժումը Միջին Ասիայում եւ սպանվել կարմիր բանակի զորամասերից մեկի հետ ընդհարման ժամանակ:

5 Թալեաթ, Թալաաթ Մեհմեդ փաշա (1874-1921) - թուրք պետական գործիչ: Հայոց Մեծ եղեռնի գլխավոր կազմակերպիչ: 1908-ին երիտթուրքերի հեղափոխությունից հետո եղել է ներքին գործերի նախարար, հետո փոստի եւ հեռագրության նախարար: Եղել է հայերի տեղահանումը եւ ցեղասպանությունը կազմակերպող «եռապետության» անդամ: Հեռակա կարգով մահվան է դատապարտվել՝ իբրեւ պատերազմի հանցագործ եւ հայերի ցեղասպանության կազմակերպիչ: Սպանվել է Բեռլինում 1921-ի մարտի 15-ին Սողոմոն Թեհլերյանի կողմից:

6 Ջեմալ փաշա Ահմեդ (1872-1922) - թուրք պետական գործիչ: Երիտթուրքերի պարագլուխներից: Հայոց Մեծ եղեռնի հեղինակներից: Եռապետության անդամ: 1914-ին նշանակվել է Թուրքիայի ծովային նախարար: 1914-1916-ին Սիրիայում գործող 4-րդ բանակի հրամանատար: 1920-1922-ին ռազմական խորհրդական Աֆղանստանում: Հեռակա կարգով մահվան է դատապարտվել՝ իբրեւ պատերազմի հանցագործ եւ հայերի ցեղասպանության կազմակերպիչ: 1922-ի հուլիսի 25-ին սպանվել է հայ վրիժառուներ Պետրոս Տեր-Պողոսյանի եւ Արտաշես Գեւորգյանի կողմից:

7 Եռապետություն: Երեք անձերի քաղաքական համաձայնությունը՝ պետական իշխանությունը իրար մեջ բաժանելու համար:

8 Մուդրոսի զինադադարը կնքվել է 1918-ի հոկտեմբերի 30-ին Անտանտի ներկայացուցիչների եւ Թուրքիայի սուլթանական կառավարության միջեւ Մուդրոս նավահանգստում (Լեմնոս կղզի): Նախատեսում էր Անտանտի ռազմանավերի ազատ անցումը սեւծովյան նեղուցներով՝ իրավունք տալով դաշնակիցներին զավթել Բոսֆորի եւ Դարդանելի ամրությունները, թուրքական կայազորների կապիտուլյացիան Հիջազում, Իրաքում, Սիրիայում եւ Եմենում, ինչպես եւ զորքերի դուրսբերումը Իրանից, Անդրկովկասից եւ Կիլիկիայից: Թուրքիան պետք է ցրեր բանակը, դաշնակիցներին հանձներ իր ռազմանավերը, վերադարձներ ռազմագերիներին: Անտանտին իրավունք էր վերապահվում գրավել Բաթումը եւ Բաքուն, ինչպես նաեւ հայկական վեց վիլայեթները՝ «Նրանցից որեւէ մեկում անկարգություններ

ծագելու դեպքում»: Դեռ մինչեւ զինադադարը պարտված Թուրքիան զիջումներ էր կորզել հաղթական Անգլիայից՝ դաշնակիցների կողմից գրավման ենթակա հայկական վեց վիլայեթներից անջատելով հայաբնակ Սիսը, Հաճընը, Զեյթունը եւ Այնթապը: Հողվածների վերջնական ձեւակերպումով ե՛ւ Արեւմտյան Հայաստանը, ե՛ւ Կիլիկիան փաստորեն մնում էին Թուրքիայի լիակատար հսկողության տակ: Անգլիացիները համաձայնեցին, որ Թուրքիան դատարկի Անդրկովկասի միայն մի մասը՝ այդպիսով իր ձեռքում պահելով պատերազմի ժամանակ զավթած տարածքի զգալի մասը (այդ թվում՝ Կարսի մարզը):

9 1919-ի հունիսի 28-ին Ֆրանսիայի Վերսալյան պալատում ստորագրվեց Առաջին համաշխարհային պատերազմի պաշտոնական ավարտը խորհրդանշող խաղաղության պայմանագիրը: Այս պայմանագրով Գերմանիան Ֆրանսիային էր վերադարձնում Էլզասն ու Լոթարինգիան, Սաարի ածխահանքերը, Բելգիային՝ Մալմեդիի եւ Էյպենի օկրուգները, Մորենեի չեզոք ու պրուսական մասերը, Լեհաստանին՝ Պոզնանը, Պոմորիեի մի մասը եւ Արեւմտյան Պրուսիայի այլ տարածքներ: Գերմանիան զրկվում էր իր բոլոր գաղութներից:

10 Կարլ Լիբկնեխտ (1871-1919) - գերմանական եւ միջազգային բանվորական շարժման գործիչ: Գերմանիայի կոմունիստական կուսակցության հիմնադիրներից: Երիտասարդության սոցիալիստական ինտերնացիոնալի հիմնադիրներից է: Բազմիցս հանդես է եկել թուրքական կառավարության եւ նրա հովանավոր Գերմանիայի հակահայկական քաղաքականության դեմ, պաշտպանել հայ ժողովրդի շահերը:

11 Գիտություն՝ բնության, հասարակության եւ մտածողության զարգացման օրենքների, ճնշված եւ շահագործվող մասսաների հեղափոխության, բոլոր երկրներում սոցիալիզմի հաղթանակի եւ կոմունիստական հասարակարգի կառուցման մասին. հիմնադիրներ են Մարքսն ու Էնգելսը: Հետագա զարգացումն է լենինիզմը:

12 Վլադիմիր Իլյիչ Լենին - ռուս հեղափոխական գործիչ եւ բոլշեւիկ, Հոկտեմբերյան հեղաշրջման ղեկավարը: Ռուսական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության առաջին ղեկավարը եւ ԽՍՀՄ փաստացի ղեկավարը 1922-ից:

13 1918-ի նոյեմբերի 11-ին ավարտվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Այդ օրը Ֆրանսիայի Կոմպյեն քաղաքի մոտ Գերմանիան հրադադար ստորագրեց, որով ճանաչեց իր պարտությունը:

14 Խորհուրդ - պետական իշխանության մարմին ՍՍՀՄ-ում, որ իրագործում է բանվոր դասակարգի դիկտատուրան եւ հանդիսանում է սոցիալիստական հասարակարգի քաղաքական կազմակերպության ձեւը:

15 Առաքելություն, հանձնարարություն, առաջադրանք: Կոչում, նախասահմանված գործ՝ նպատակ:

16 պահ, ժամ

17 Տարածություն, ուր տեղի են ունենում պատերազմական գործողությունները: Մարտահենադաշտ, ռազմահենադաշտ:

18 Մայր երկիրը կամ պետությունը՝ իր գաղութի նկատմամբ:

19 Պատերազմական տուգանք: Պատերազմից առաջացած վնասների հատուցում, որ վճարում է պարտված պետությունը հաղթողին:

20 ապառազմականացում

21 ռազմամոլություն

22 Կապիտալիզմին փոխարինելու եկած հասարակական-տնտեսական կացութաձեւ՝ կոմունիստական հասարակարգ, որտեղ իշխում է արտադրության միջոցների հանրային սեփականությունը: Մարքսի, Էնգելսի եւ Լենինի կողմից ստեղծված պրոլետարական հեղափոխության եւ կոմունիստական հասարակության կառուցման ուսմունքը:

23 ծրագիր, նախագիծ

24 Կլեմանսո Ժորժ Բենժամեն (1841-1929) - ֆրանսիական քաղաքական գործիչ: Ֆրանսիայի ակադեմիայի անդամ: 1906-1909-ին եւ 1917-1920-ին Ֆրանսիայի վարչապետ: 1919-1920-ին Փարիզի հաշտության կոնֆերանսի նախագահն էր: Մեծ դեր է խաղացել 1919-ի Վերսալի հաշտության պայմանագրի մշակման գործում:

25 Ամբողջ աշխարհի կոմունիստական կուսակցությունների եւ կոմունիստական կազմակերպությունների միջազգային միավորում՝ կոմունիստական ինտերնացիոնալ:

26 Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալին - իսկական ազգանունը՝ Ջուղաշվիլի, հեղ. ծածկանունները՝ Կոբա, Սոսո: ԽՄԿԿ, խորհրդային պետական, միջազգային կոմունիստական եւ բանվորական շարժման ղեկավար գործիչ:

27 առաջավոր ջոկատ (հատվածի ընդգծումը հեղինակինն է)

28 Հեղափոխություն: Արմատական փոփոխություն, հեղաշրջում:

29 կանոն, կարգ, սովորույթ, չափաքանակ

30 մահմեդականների կրոնական գիրքը

31 Անառարկելի ճշմարտություն ընդունվող դրույթ:

32 մոլեռանդություն, մոլագարություն

33 Արաբական ամիրապետ՝ թագավոր եւ նրա տիտղոսը: Եգիպտական եւ թուրքական սուլթանը եւ նրա տիտղոսը: Մահմեդականների հոգեւոր պետը եւ նրա տիտղոսը:

34 մահմեդական ազգերի, առավելապես օսմանյան թուրքերի միապետ

35 ժողովրդավարություն, ժողովրդապետություն: Կառավարման ձեւ, որում իշխանությունը գտնվում է ժողովրդի ձեռքին:

36 մակաբույծ, պորտաբույծ, ուրիշի աշխատանքը շահագործող մարդ, ուրիշի հաշվին ապրող, հացկատակ

37 Զինվորական մեծ միավորում, որի մեջ մտնում են մի քանի դիվիզիաներ:

38 ռազմագետ, ռազմավար, ղեկավար

39 Զրուցակցի անվան փոխարեն կետեր են. դա արվել է վերջինիս անվտանգության համար:

40 Ռզա Նուր բեյ - Թուրքիայի պետական գործիչ: 1921-ին մասնակցել է Մոսկվայի խորհրդա-թուրքական բարեկամության եւ եղբայրության պայմանագրի կնքմանը:

41 խորհրդարան, գերագույն խորհուրդ

42 Փոքր Ասիայի մյուս անվանումը, որը հունարեն նշանակում է «արեւելք»: Քեմալական շարժումից հետո, երբ երկրում ուժեղացավ պանթուրքիզմը, ապա թուրքական աշխարհագրության մեջ ավելի ընդունելի դարձավ Անատոլու անվանումը, եւ այն տարածեցին ամբողջ ասիական Թուրքիայի վրա՝ հավասարության նշան դնելով Անատոլիայի եւ Ասիական Թուրքիայի միջեւ:

43 Թուրքիայի մայրաքաղաքը 1923-ից: Անունը ծագել է հնդեւրոպական «անկեր» (խարիսխ) բառից, որը տրվում է կանգառներին՝ թե ցամաքում եւ թե ծովում: Այդպես է կոչվել, որովհետեւ Անկարան եղել է մեծ ճանապարհների կանգառ: Մինչեւ 1930-ը հայտնի էր Անգորա անունով:

44 անգլիասեր

45 Բրիտանական կղզիների հին անվանումը: Հայտնի է «խորամանկ Ալբիոն» արտահայտությունը՝ անգլիական դիվանագիտության երկդեմ քաղաքականության պատճառով:

46 Մոսուլը քաղաք է Իրաքում: Անունը առաջացել է արաբերեն մոսուլ, այսինքն՝ «կապ» բառից: Նկատի է ունեցվել Տիգրիսի վրա եղած կամուրջը, որը Տիգրիսի երկու ափերը կապել է միմյանց:

47 տարածքային

48 Խալիլ, Հալիլ փաշա Քուլթ (1882-1957) - թուրք զինվորական գործիչ, գեներալ: Էնվերի հորեղբայրը: 1918-ի մայիսի 15-ին Խալիլի զորքերը զավթել են Ալեքսանդրապոլը, այնուհետեւ Ատրպատականով արշավել Բաքու, կոտորել տեղի հայերին (շուրջ 30 000 մարդ): 1920-ի մարտին Խալիլ, Նուրի փաշաները եւ մուսավաթականները հրդեհել են հայկական Շուշի քաղաքը եւ կոտորել հայ բնակչության մեծ մասին (35.000 մարդ):

49 Շաքիր փաշա - թուրք զինվորական գործիչ: Հիշատակվում է Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում վարչական, դատական վերափոխումներ իրականացնելու ծրագրի շրջանակներում: Աբդուլ Համիդ 2-րդը վավերացրեց «Մայիսյան բարենորոգումներ»-ի փոքր-ինչ փոփոխված ծրագիրը, «բարձր կոմիսար» (Շաքիր փաշային) ուղարկեց Հայաստան՝ բարենորոգումներ «կենսագործելու»: Սակայն հայկական կոտորածները սկսվեցին նոր թափով, որոնց զոհ գնաց 300.000 հայ:

50 Նազիմ բեյ Սելանիկլի (1870-1926) - թուրք գործիչ: 1915-ի սկզբին մասնակցել է երիտթուրքերի ղեկավարների այն գաղտնի խորհրդակցությանը, որտեղ որոշվել է լիովին ոչնչացնել հայերին: Կ.Պոլսի ռազմական դատարանը նրան հեռակա կարգով մահվան է դատապարտել: 1923-ին վերադարձել է Թուրքիա, հարել Մուստաֆա Քեմալի քաղաքական հակառակորդներին, մասնակցել նրա դեմ դավադրությանը, որի համար կախաղան է բարձրացվել:

51 Իոֆե Ադոլֆ Ա. (1883-1927) – խորհրդային պետական, կուսակցական գործիչ: ՍՄԿԿ անդամ 1917-ից: Բրեստյան հաշտության բանակցությունների ժամանակ խորհրդային պատվիրակության անդամ, լիազոր ներկայացուցիչ Բեռլինում, 1922-1924-ին՝ Չինաստանում, 1924-1925-ին՝ Ավստրիայում:

52 Կ. Ռադեկ – խորհրդային պետական գործիչ: Կոմինտերնի գործկոմի քարտուղար: Արեւելքի ժողովուրդների առաջին համագումարում (1920) հանդես է եկել «Միջազգային իրադրության եւ Արեւելքի աշխատավոր զանգվածների խնդիրների մասին» զեկույցով:

53 Շփում, սերտ հարաբերություն:

54 Չիչերին Գեորգի Վասիլեւիչ (1872-1936) – խորհրդային պետական գործիչ, դիվանագետ: 1918-ի մայիսից եղել է ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ, 1918-1930-ին՝ ՌՍՖՍՀ (1923-ից՝ ՍՍՀՄ) արտգործժողկոմ: 1918-ին խորհրդային պատվիրակության կազմում ստորագրել է Բրեստի հաշտության պայմանագիրը: 1920-1921-ին բանակցություն-

ներ է վարել Թուրքիայի, Իրանի, Աֆղանստանի կառավարությունների հետ, ստորագրել բարեկամության պայմանագրեր: Ղեկավարել է Ջենովայի կոնֆերանսի (1922), Լոզանի կոնֆերանսի (1922-1923) խորհրդային պատվիրակությունները:

55 Կարախան (Կարախանյան) Լեւոն Միքայելի – խորհրդային պետական գործիչ, դիվանագետ: 1917-ին եւ 1918-ի սկզբին Բրեստ-Լիտովսկում Գերմանիայի հետ բանակցությունների ժամանակ խորհրդային պատվիրակության քարտուղարն էր: 1918-ի մարտից՝ Արտաքին գործերի ժողկոմի տեղակալ. ղեկավարում էր արեւելյան քաղաքականությունը:

56 Զինովեւ Գեորգի Վասիլեւիչ (1887-1934) – խորհրդային ռազմական գործիչ: 1917-ից ՍՄԿԿ անդամ: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից, օդաչու: 1919-ից Թուրքեստանյան բանակի հրամանատար, Արեւելյան ռազմաճակատի՝ հարավային հարվածային զորքի հրամանատար: Կոմինտերնի գործկոմի նախագահ:

57 Բեքիր Սամի (1865-1933) - Թուրք քաղաքական գործիչ: Դիվանագիտական ծառայություն է կատարել Ռուսաստանում օսմանյան դեսպանատանը, ապա եղել Վանի, Տրապիզոնի եւ այլ նահանգների նահանգապետ: 1920-1921-ին Անկարայի կառավարության արտաքին գործերի առաջին նախարարը: 1920-ի նոյեմբերին գլխավորել է թուրքական պատվիրակությունը Ալեքսանդրապոլի հայ-թուրքական բանակցություններում:

58 Աղաեւ Ահմեդ - պանթուրքիզմի (համաթյուրքականություն, ծայրահեղ ազգայնամոլ վարդապետություն, որի հիմքում ընկած է թյուրքալեզու ժողովուրդներին թուրքերի գլխավորությամբ մեկ պետության մեջ միավորելու գաղափարը) առավել հայտնի տեսաբաններից:

59 Ֆրունզե - Միխայիլ Վասիլեւիչ (կուսակցական ծածկանունը՝ Արսենի, Տրիֆոնիչ- 1885-1925) Պիշպեկ: Խորհրդային կուսակցական, պետական եւ ռազմական գործիչ, ռազմական տեսաբան: 1918-ի դեկտեմբերի 26-ին նշանակվել է Արեւելյան ռազմաճակատի 4-րդ բանակի հրամանատար, 1919-ի օգոստոսին Թուրքեստանյան ռազմաճակատի հրամանատար:

60 Էլիավա Շալվա Զուրաբովիչ – խորհրդային պետական եւ կուսակցական գործիչ, 1917-ին ընտրվել է բանվորների, զինվորների եւ գյուղացիների դեպուտատների խորհրդի նախագահ: 1920-ին դիվանագիտական աշխատանք է կատարել Իրանում եւ Թուրքիայում: 1921-ին եղել է Վրացական ՍՍՀ ռազմական գործերի կոմիսար:

61 Արալով Սեմյոն Իվանովիչ – խորհրդային պետական, կուսակցական եւ ռազմական գործիչ: 1918-ին Մոսկվայի ռազմական շրջանի օպերատիվ բաժնի ղեկավար, ռազմական գծով ժողկոմ:

62 Հրազեններ փորձելու եւ վարժություններ կատարելու ընդարձակ անբնակ վայր: Հրաձգարան:

63 Մուստաֆա Սուբխի - Թուրքիայի կոմունիստական կուսակցության հիմնադիրներից: 1910-ից օսմանյան սոցիալիստական կուսակցության անդամ: 1914-ին որպես թուրքահպատակ աքսորվել է Ուրալ: Համալրել է ՌՍԴԲ(բ)Կ շարքերը: Մասնակցել է արեւելքի ժողովուրդների 1-ին համագումարին (1920): 1920-ին ընտրվել է ԹԿԿ նախագահ:

64 Կարաբեքիր Քյազըմ - թուրքական գեներալ: 1918-1919-ին եղել է 1-ին, 2-րդ, 15-րդ թուրք-կովկասյան բանակի կորպուսների հրամանատար: Մասնակցել է Երզնկայի, Էրզրումի, Կարսի գրավմանը: Հետագայում՝ Արեւելյան ռազմաճակատի գործերի հրամանատար: 1920-ի սեպտեմբերին թուրք զորքերը նրա գլխավորությամբ ներխուժել են Արեւելյան Հայաստան:

65 չափ, քանակություն

66 Բոլոր մահմեդականներին իսլամի դրոշի տակ միավորելու քաղաքական շարժում

67 Հանրապետություն

68 զավթախուժում

69 ազգայնական

70 բռնագրավիչ, զավթիչ, նվաճող

71 տարաձայնություն, բախում, ընդհարում

72 արկածախնդրություն, բախտավորձ

73 Շանթ Լեւոն (Նահաշպետյան, ապա հոր՝ Սեղբոսի անունով՝ Սեղբոսյան-1869-1951) - գրող, հրապարակախոս, մանկավարժ, հասարակական գործիչ: Եղել է դաշնակցական կուսակցության անդամ: 1919-ին Փարիզում մասնակցել է Հայ ազգային համագումարի աշխատանքներին: Հայաստանի Հանրապետության կառավարության հրավերով վերադարձել է Երեւան, ընտրվել Հանրապետության խորհրդարանի երեք նախագահներից մեկը: 1920-ի ամռանը գլխավորել է Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցելու համար Մոսկվա ուղեւորված Հայաստանի պատվիրակությունը:

74 Միկոյան Անաստաս Հովհաննեսի (1895-1978) – խորհրդային պետական եւ կուսակցական գործիչ, սոցիալիստական աշխատանքի հերոս: 1918-ի մարտին մասնակցել է մուսավաթիստական խռովության ճնշմանը, վիրավորվել: Բաքվի կոմունայի պարտությունից հետո՝ 1918-ի հուլիսից կուսակցության ընդհատակյա քաղկոմի նախագահ:

75 Տեր-Գաբրիելյան Սահակ (1886-1937) – խորհրդային պետական եւ կուսակցական գործիչ: ՍՄԿԿ անդամ: Բաքվի կոմունայի շրջանում նավթի գծով կոմիսար: 1921-ից ՀՍՍՀ մշտական ներկայացուցիչ ՌՍՖՍՀ-ում: 1920-ին ընդգրկվել է Լեգրանի պատվիրակության կազմում:

76 Քաղաք Մեծ Հայքի Տայք նահանգի Ողաքե գավառում, Ճորոխի աջակողմյան վտակ Օլթիի ափին: 1877-ին գրավել են ռուսական զորքերը եւ 1878-ին նորաստեղծ Կարսի մարզի կազմում միացրել Ռուսական կայսրությանը: 1914-ի դեկտեմբերի 22-ին թուրքական զորքերը հարձակվել են Օլթիի ուղղությամբ: Բնակչության մեծ մասը հեռացել է Կարս եւ Ախալցխա, իսկ մյուս մասը սրի է քաշվել թուրքերի կողմից: 1915-ի հունվարի 3-ին ռուսները վերագրավել են Օլթին: 1918-ի ապրիլի 9-ին թուրք զորքերը, վերստին գրավելով քաղաքը, տեղահանել եւ կոտորել են հայ բնակչությանը: 1920-ի հունիսին Օլթին իր քարածխի հանքերով միացվել է Հայաստանի Հանրապետությանը, զգալի թվով հայեր վերադարձել են: Քեմալական Թուրքիան 1920-ի սեպտեմբերին պատերազմ է սկսել Հայաստանի դեմ՝ գրավել Օլթին: Ներկայումս փոքր քաղաք է Թուրքիայի Էրզրումի իլում:

77 Ա. Ֆ. Միլլերը իր «Թուրքիայի համառոտ պատմություն» (1948), «Թուրքիայի նորագույն պատմության ակնարկներ» (1948) եւ այլ աշխատություններում քեմալականներին համարում է ճնշված ժողովուրդների ազատագրման կողմնակիցներ՝ չբացահայտելով Թուրքիայի ազգային փոքրամասնությունների նկատմամբ քեմալականների քաղաքականության հետադիմական էությունը, եւ լռության է մատնում այն իրողությունը, որ քեմալականները շարունակում էին իրենց նախորդների հակահայկական քաղաքականությունը՝ ջարդեր կազմակերպելով Կիլիկիայում եւ այլուր 1920-1922-ին: 1920-ի քեմալական արշավանքը Հայաս-

տան Ա. Միլլերը բացատրում է ոչ թե քեմալականների ազգայնական քաղաքականությամբ ընդհանրապես, այլ միայն նրանով, որ «քեմալականների մեջ կային ոչ քիչ հետադիմականներ ու ազգայնամոլներ» («Թուրքիայի համառոտ պատմություն», էջ 183): Հեղինակը լռում է նաեւ Հայաստանի տարածքում քեմալականների իրագործած բռնությունների ու թալանի մասին:

78 Պավլովիչ, Վոլոնտյոր Միխայիլ Պավլովիչ (1871-1927) - Ռուսաստանում հեղափոխական շարժման մասնակից: Արեւելագետ գիտնական: ՌՍԴԲԿ անդամ: 1905-1917-ին Ֆրանսիա վտարանդման տարիներին զբաղվել է Արեւելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման խնդիրների ուսումնասիրությամբ: 1917-ին վերադարձել է Ռուսաստան: 1918-ին ընդունվել է ՌԿ(բ)Կ: Կոմինտերնի գործկոմի անդամ: 1920-ին մասնակցել է Արեւելքի ժողովուրդների 1-ին համագումարի կազմակերպման, ղեկավարման աշխատանքներին:

79 Օրջոնիկիձե Գեորգի Կոնստանտինի (Սերգո-1886-1937) – խորհրդային պետական եւ կուսակցական գործիչ: Հյուսիսային Կովկասի պաշտպանության խորհրդի նախագահ: 1920-ից կովկասյան ռազմաճակատի ՌՀԽ-ի անդամ եւ Հյուսիս-կովկասյան հեղկոմի նախագահ, Հյուսիսային Կովկասում խորհրդային իշխանության վերականգնման բյուրոյի նախագահ: 1920-ի ապրիլից եղել է ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի նախագահ:

80 Կիրով (կուսակցական ծածկանունը, իսկական ազգանունը՝ Կոստրիկով) Սերգեյ Միրոնովիչ - Կոմունիստական կուսակցության եւ խորհրդային պետության գործիչ (1886-1934): 1917-ին ղեկավարել է Հյուսիսային Կովկասի բոլշեւիկյան քաղաքական աշխատանքը: Գ. Կ. Օրջոնիկիձեի հետ ղեկավարել է 11-րդ բանակի հարձակումը Հյուսիսային Կովկասում: 1920-ին ընտրվել է ՌԿ(բ)Կ ԿԿ կովկասյան բյուրոյի անդամ, 1921-ին՝ ՌԿ(բ)Կ ԿԿ անդամության թեկնածու, 1923-ին՝ անդամ: 1921-1926-ին եղել է Ադրբեջանի կոմկուսի ԿԿ քարտուղար: Անդրֆեդերացիայի հիմնադիրներից եւ ղեկավարներից է:

81 Կարինյան (Գաբրիելյան) Արտաշես Բալասիի (1886-1982) – խորհրդային կուսակցական ու պետական գործիչ, գրականագետ, պատմաբան: ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս: ՍՄԿԿ անդամ: 1918-ին Բաքվի կոմունայի արդարադատության կոմիսար: 1921-ին ՀԽՍՀ արդարադատության ժողկոմ: 1923-1924-ին ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահի տեղակալ, 1924-1928-ին՝ նախագահ:

82 Ա. Սկաչկո - Ազգությունների գործերի կոմիսարիատի պատասխանատու աշխատող: Լ. Բ. Տրոցկու «Հայաստանը եւ Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածը («Ժիզն նացիոնալնոստեյ» թերթի 1921թ. մարտի 4-ի համարում) ստորագրված է Ա.Սկաչկո կեղծանվամբ: Տրոցկին 1918-1920 թթ. եղել է ռազմական եւ ժողովրդական կոմիսար:

83 Բ. Լեգրան – խորհրդային դիվանագետ, կուսակցական գործիչ: Լեգրանի պատվիրակության (կազմվել է 1920-ի ամռանը) նպատակն էր բարիդրացիական հարաբերություններ հաստատել ՌՍՖՍՀ-ի եւ Հայաստանի միջեւ, միջնորդ լինել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում: Պատվիրակության ղեկավարն էր Բ.Լեգրանը, անդամներն էին Ս. Տեր-Գաբրիելյանը, Ա. Հովհաննիսյանը: Հուլիսի 28-ին Լեգրանը պաշտոնապես նշանակվեց Հայաստանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ: Լեգրանի պատվիրակության նախաձեռնությամբ 1920-ի օգոստոսի 10-ին Թիֆլիսում կնքվեց ժամանակավոր համաձայ-

նագիր, որով ՌՍՖՍՀ-ը ճանաչում էր Հայաստանի Հանրապետությունը, կողմերի միջեւ դադարեցվում էին ռազմական գործողությունները:

84 Մոլոք - զոհեր պահանջող անողորմ, դաժան ուժի խորհրդանիշ

85 ինքնավար

86 Ավիս (Ավետիս) Սողոմոնի Նուրիջանյան) - հեղափոխական, կուսակցական ու պետական գործիչ: 1919-ին ընտրվել է ՌԿ(բ)Կ Բաքվի ընդհատակյա կոմիտեի անդամ: 1920-ին ընտրվել է ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի (Արմենկոմ) կազմում, այնուհետեւ ՀԿ(բ)Կ ԿԿ կազմում: Եղել է Հայաստանի հեղկոմի անդամ եւ ստորագրել Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման դեկլարացիան: 1921-1923-ին՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար, Հայաստանի ռազմական գործերի ժողկոմ եւ ժողկոմխորհի նախագահության անդամ: Լենինն ասել է՝ «Հանուն համաշխարհային հեղափոխության թող ողջակիզվի Հայաստանը»: Իրարից խլելով շատ «հայ-մարքսիստներ» կրկնել են կարգախոսը: Ոչ անհայտ Պողոս Մակինցյանը Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սան Բակունցի հետ վիճելիս ցույց է տվել իր նվիրվածությունը լենինյան կուսակցությանը, ասել է. «Եթե միջազգային հեղափոխությունը պահանջի, որ հայ ժողովուրդը բնաջինջ լինի՝ չպետք է ցավել դրա համար, պետք է բնաջնջվի» («Էջմիածին», 2000, Ա, էջ 179),- պատմել է Ա. Պատմագրյանը: «Իրենից դուրս եկած» Բակունցը հակադարձել է. «Եթե հայ ժողովրդի ազատագրությունը պահանջի, որ միջազգային հեղափոխությունը կործանվի, չպետք է ցավել, թող կործանվի»:

87 տեսանկյուն, տեսակետ

88 հնարավոր, ենթադրելի

89 Բերիա Լավրենտի Պավելի – խորհրդային պետական եւ քաղաքական գործիչ, պետանվտանգության գլխավոր կոմիսար: Գնդակահարվել է 1954-ին:

90 Ալթայը լեռնային երկիր է Ասիայում՝ ԽՍՀՄ-ի, Մոնղոլիայի եւ Չինաստանի հարեւանությամբ: Անունը ստուգաբանվում է երկու կերպ: Ալթայը արեւմուտքից արեւելք՝ Արեւմտասիբիրական դաշտավայրից մինչեւ Գոբի, ձգվում է 2000 կիլոմետր երկարությամբ:

91 առաջնորդ

92 պնակալեզ, հաճկատար

93 դատարկախոսություն, ճամարտակություն

94 Այդ մասին ավելի հանգամանորեն՝ Կ. Դալլաքյան, Հուշապատում (դեմքեր, իրողություններ, մտորումներ), Եր., 1998, էջ 166-168. Մ. Սարգսյան, Երկերի ժողովածու, Հ. Դ, Եր., 2005, էջ 313. Հր. Թամրազյան, Հուշերիս հետ, Եր., 2002, էջ 64-66:

95 Շավարշ Բասենցյան - Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից (1874-1937 թ°.): Ծնվել է Ալաշկերտի Խաչլու գյուղում: Գյուղական դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Էջմիածնի Գեւորգյան ճեմարանում, այնուհետեւ հաճախել է Շուշիի թեմական դպրոց, հետո Սոֆիայի ռազմական վարժարան: Կռվել է Քեռու (Արշակ Գաֆավյանի) եւ Անդրանիկ զորավարի զորքերում՝ որպես հեծյալ վաշտի հրամանատար (խմբապետ):

96 Հր. Թամրազյան, Գրական ուղիներում, Եր., 1962, էջ 204-234:

97 կրկնահանցանք, կրկնություն

98 Շավարշ Բասենցյանի (Խմբապետ Շավարշ) «Արկածալի կյանք» (Եր.2006) գրքի՝ պատմական գիտությունների դոկտոր Վարդան Գրիգորյանի հեղինակած առաջաբանում

կարդում ենք՝ «Առաջին անգամ «Խմբապետ Շավարշի» իսկական գնահատականը տվեց շնորհաշատ գրականագետ, ակադեմիկոս Հրանտ Թամրազյանը, որը դեռևս 1962 թ. (մենք լավ գիտենք, թե դա ինչ դժնդակ ժամանակ էր նման ազատ խոսք ասելու համար) զարմանալի խիզախությամբ հանդես եկավ: «Խմբապետ Շավարշը» պոեմի թամրազյանական, առողջ ու մտավոր կապանքներից ձերբազատված վերլուծությունը նոր խոսք էր այդ բնույթի գրական ստեղծագործություններն արժեքավորելու ասպարեզում...Նա ռումբի պես պայթեց լճացած, ճահճացած, հին արժեքներին ու դոգմաներին ամուր կառչած մի քանի վա՛յ գրականագետների գլխին, որոնք դիմեցին զրպարտչական իրենց զենքին՝ ապարդյուն ջանքեր գործադրելով խլացնելու ազնիվ գիտնականի ձայնը» (էջ 4):

99 Աշոտ Հովհաննիսյան (1887-1972) - Անդրկովկասում հեղափոխական շարժման մասնակից, կուսակցական եւ պետական գործիչ, պատմաբան: ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս: 1920–1921-ին եղել է նորաստեղծ Սովետական Հայաստանի լուսավորության ժողկոմը, 1922-1927-ին Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար:

100 Զուտ հայկական մարտնչող ազգայնականություն՝ իմպերիալիստական ըմբռնմամբ:

101 Աբով Գեւորգ - Գեւորգ Արշակի Աբովյան (1897-1965) - բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, գրականագետ, պրոֆեսոր, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՍՄԿԿ անդամ 1920-ից:

102 «Զուտ ֆինանսական խնդիր: Քանի որ Ղարաբաղը նստած է դոտացիայի վրա: Ադրբեջանն ինքը կարող է տալ դոտացիա, իսկ Հայաստանն արդյոք կարո՞ղ է հատկացնել դոտացիա Ղարաբաղը պահելու համար»:

103 պատերազմական շրջան, արշավանք

104 Լլոյդ Ջորջ Դեյվիդ (1868-1945) - Անգլիական պետական գործիչ, լիբերալ կուսակցության պարագլուխ: Առեւտրի (1905-1908) եւ ֆինանսների (1908-1915) նախարար: 1916-1922-ին եղել է կոալիցիոն կառավարության պրեմիեր մինիստր: 1919-1920-ի Փարիզի հաշտության կոնֆերանսի եւ 1919-ի Վերսալյան պայմանագրերի գլխավոր հեղինակներից: 1919-1922-ին Լլոյդ Ջորջը պաշտպանել է անգլո-հունական պատերազմը թուրքական ազգայնական շարժման դեմ, սակայն, անհաջողության մատնվելով, պաշտոնաթող եղավ:

105 Չերչիլ - Ուինստոն Լեոնարդ Սպենսեր (1874-1965), Մեծ Բրիտանիայի պետական գործիչ, պահպանողական կուսակցության պարագլուխ: Եղել է գաղութների նախարարի տեղակալ, առեւտրի, ներքին գործերի, ռազմածովային նախարար: 1917-1918-ին ռազմական մատակարարման նախարարն էր, 1919-1921-ին ռազմական նախարար եւ ավիացիայի նախարար: Սովետական Ռուսաստանի դեմ ինտերվենցիայի գլխավոր կազմակերպիչներից է:

106 Մղիվանի Բուդու (Պոլիկարպ Գուրգենովիչ) – խորհրդային պետական գործիչ: 1920-1921-ին Անդրկովկասի կովկասյան բյուրոյի անդամ, Վրաստանի հեղկոմի քարտուղար:

107 Երգչախումբ: Ձայնախումբ:

108 Ըստ ավանդության Դամոկլեսը նախանձում էր Դիոնիսոս բռնավորի բախտավորությանը: Դիոնիսոսը, կամենալով հասկացնել նրան յուր հոգեկան ծանր վիճակը, Դամոկլեսին հրավիրեց ճոխ ընթրիքի եւ հրամայեց իր ծառաներին, որ նրա գլխի վերեւում մի ձիու մազից կախեն ծանր, սրածայր սուր: Երբ Դամոկլեսը սուրը տեսավ, լիքը բաժակը ձեռքից վայր ընկավ: Փխբ.- վտանգ, որ ամեն վայրկյան սպառնում է մարդուն:

109 Լոզանի միջազգային կոնֆերանսը հրավիրվել է Մերձավոր Արեւելքի դրությունը կարգավորելու համար՝ Թուրքիայում անգլո-հունական հարձակման ձախողումից հետո: Տեղի է ունեցել 1922-ի նոյեմբերի 20-ից 1923-ի հուլիսի 24-ը Լոզանում (Շվեյցարիա): Լոզանի կոնֆերանսի հիմնական խնդիրը Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախապատրաստումն ու Սեւծովյան նեղուցների ռեժիմի սահմանումն էր: Մասնակցել են Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Հարավսլավիան, Ճապոնիան, ԱՄՆ-ն (դիտորդ) եւ Թուրքիան:

110 Խորհրդային դիվանագետի հուշերը:

111 ընդդիմություն, ընդդիմադիր խումբ

112 Ռեուֆ բեյ - Թուրք քաղաքական գործիչ: Տրապիզոնի բանակցությունների ժամանակ (1918) Թուրքիայի պատվիրակության նախագահն էր:

113 չերքեզ

114 կոնֆերանս

115 սովետամետ

116 կողմնորոշում

117 Իսմեթ փաշա - թուրք քաղաքական գործիչ: Լոզանի կոնֆերանսի ժամանակ թուրքական պատվիրակության կազմում էր:

118 խորհրդակցություն, խորհրդատվություն

119 համաձայնագիր, պայմանագիր

120 Քերզոն Ջորջ Նաթանիել (1859-1925) - անգլիական հրապարակախոս եւ պետական գործիչ, դիվանագետ, ճանապարհորդ: Մարկիզ: 1898-1905-ին՝ Հնդկաստանի փոխարքա, 1901-ից՝ Լորդերի պալատի անդամ, 1919-1924-ին՝ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար:

121 հեղնանք, ծաղրանք

122 արկածախնդիր, բախտախնդիր

123 կուռք, պաշտամունքի առարկա դարձնել: